Azg Ազգ

armenian daily

13 ՅՈՒԼԻՍ 2004 ԵՐԵՔՇԱԲԹԻ 128 (3050)

Գուլուզադե. «Հայաստանը մեզ ոչ մի շրջան չի վերադարձնի»

Ադրբեջանի նախկին բոլոր նախագահների՝ Այազ Մութալիբովի, Աբուլֆազ Էլչիբեյի եւ Հեյդար Ալիեւի խորհրդական, հաղաքագետ Վաֆա Գուլուզադեն «Ձերկալո» թերթին տված հարցազրույցում ասել է, որ «Հայաստանը մեզ ոչ մի շրջան չի վերադարձնի»: Տարիներ շարունակ ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ անմիջականորեն զբաղվող Գուլուզադեն հերթական անգամ Ռուսաստանին է մեղադրել ադրբեջանական շրջանները եւ Ղարաբաղը «զավթելու» մեջ, իսկ «ամերիկացիները բացարձակապես չեն հասկանում ղարաբաղյան խնդիրն այնպես, ինչպես արեւմտաեվրոպացիները»: «Մենք կամ պետք է վերականգնենք մեր ինքնիշխանությունը, կամ էլ, հանուն վեց շրջանների ազատագրման, մշտապես հրաժարվենք Լեռնային Ղարաբաղից եւ Լաչինից», ասել է նա:

Մինսկի խումբը նոր առաջարկներ չի բերել

Միջնորդների նախկին բոլոր չորս առաջարկներին միայն Երեւանն է «այո» ասել

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը երեկ ընդունել է տարածաշրջանային այցով Հայաստան ժամանած ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ, դեսպաններ Յուրի Մերզլյակովին (Ռուսաստան), Սթիվեն Մաննին (ԱՄՆ) եւ Անրի Ժակոլենին (Ֆրանսիա): Հանդիպմանը մասնակցել են նաեւ Հայաստանում եռանախագահող երկրների դեսպաններ Անատոլի Դոյլուկովը, Ջոն Օդուելը, Անրի Կյունին: Ըստ Հայաստանի նախագահի մամլո գրասենյակի հաղորդագրության, «զրուցակիցները քննարկել են ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացի ներկա փուլի հետ կապված հարցեր»:

Միջնորդներին երեկ ընդունել է նաեւ արտգործնախարար Վարդան Օսկանյանը: Ըստ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչության հաղորդագրության, հանդիպման ընթացքում համանախագահները ներկայացրել են վերջին շրջանում Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների, ինչպես նաեւ արտաքին գործերի նախարարների հանդիպումների հիման վրա իրենց ստացած տպավորությունների ամփոփումը եւ դրա վրա հենվելով՝ ղարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարները: «Օսկանյանը կրկին ճշտեց Հայաստանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման վերաբերյալ, տեղի ունեցավ մտքերի փոխանակում տարածաշրջանային զարգացումների շուրջ», ասվում է հաղորդագրությունում:

Մի քանի օր առաջ Օսկանյանը մամուլի ասուլիսում նշեց, որ Մինսկի խմբի այս այցելությունը խորհրդանշական բնույթ ունի, նոր առաջարկներ չեն սպասվում, քանի որ նախագահներ Քոչարյանի եւ Ալիեւի հանդիպումներն առաջընթաց չեն արձանագրել, ինչը հնարավորություն կտար թղթին հանձնել որեւէ առաջարկ:

Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովն, ըստ «Նովոստի» գործակալության, երեկ նշել է, որ Մինսկի խումբը նոր առաջարկներ չի բերի, միջնորդները հակամարտության կողմերի հետ կանցկացնեն մտքերի փոխանակում, իսկ այցը կայանում է այն պատճառով, որ միջնորդները վերջին 6 ամիսներին տարածաշրջանում չեն եղել:

Տես էջ 2

ՍՍԱՄԲՈՒԼ

Մեսրոպ պատրիարքը ընդունեց Երուսաղեմի հունաց պատրիարքին

Երեկ երեկոյան Թուրքիայի հայոց պատրիարք Մեսրոպ արք. Մութաֆյանն ընդունել է միջեկեղեցական այցով Սամբուլում գտնվող Երուսաղեմի հունաց պատրիարք Իրինիոս արքեպիսկոպոսին: Այս մասին գիտերը «Ազգին» տեղեկացրեց Պոլսում լույս տեսնող «Ժամանակ» թերթի խմբագիր **Արա Քոչը**, որի ասելով հունաց պատրիարքի ընդունելությունը տեղի է ունենում այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ Երուսաղեմում խիստ լարված են հարաբերությունները հայոց եւ հունաց պատրիարքությունների միջեւ՝ սուրբ վայրերում գտնվող հայկական արժեքների նկատմամբ հույն եկեղեցականների ոտնձգությունների հետեւանքով, որի կապակցությամբ Երուսաղեմի հայոց պատրիարքությունը մտադիր է բողոք ներկայացնել եկեղեցիների համաշխարհային խորհրդին:

Համենայն դեպս, ինչպես մեր թղթակցին հաղորդել են Պոլսո պատրիարքության ներկայացուցիչները, հանդիպումը թեեւ անցել է շատ ջերմ, սակայն Մութաֆյան պատրիարքն արձարձել է երկու պատրիարքությունների միջեւ առկա լարվածության հարցը եւ հյուր պատրիարքին տեղեկացրել, թե ինքը շարունակական կապի մեջ է գտնվում Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արք. Մանուկյանի հետ:

Իրինիոս պատրիարքն ու նրա գլխավորած պատվիրակությունը, նախքան Մեսրոպ պատրիարքի կողմից ընդունվելը աղոթել են Պոլսո հայոց մայր եկեղեցու մեջ: Հանդիպման ավարտին Պոլսո հայոց պատրիարքը պատրիարքարանի պարտեզում թեյասեղան է սարքել ի պատիվ հյուրի:

Ինչն է խանգարում փոքր եւ միջին ձեռներեցության զարգացմանը Հայաստանում

Տեղախոսային սոցիոլոգիական հարցում

«Ազգ» օրաթերթի պատվերով սոցիոլոգ է. Զավարյանը հունիսի 23-30-ն իրականացրել է «Բնակչության կարծիքը որոշ տնտեսական եւ սոցիալական հարցերի մասին» հեռախոսային սոցիոլոգիական հարցումը: 500 հարցվածներից 77-ը հրաժարվել է հարցերին պատասխանելուց: Այսօր ներկայացնում ենք հարցաթերթիկի հարցերից միայն մեկի՝ «Ինչն է Ձեր կարծիքով խանգարում փոքր եւ միջին ձեռներեցության զարգացմանը Հայաստանում», պատասխանները, ինչպես նաեւ (2-րդ էջում) մեր թղթակցի մեկնաբանությունները:

Չինովնիկների բյուրոկրատությունը	105	24,82%
Բարձր հարկերը	91	21,51%
Հովանավորչությունը	58	13,71%
Խոշոր բիզնեսը	57	13,48%
Օրենքների անկատարությունը	42	9,92%
Սկզբնական գումարի բացակայությունը	35	8,27%
Կաշառակերությունը	30	7,09%
Ղեկավարությունը	23	5,43%
Կլանները եւ թաղային հեղինակությունները	20	4,73%
Վարկերի բարձր տոկոսը	19	4,49%
Ձեռներեցների ոչ բավարար գիտելիքները	17	4,02%
Ոչ մի բան չի խանգարում	16	
Բնակչության ցածր գնողունակությունը	14	
Մախային ծառայությունը	11	
Հրաժարվում է պատասխանել	8	
Օրինազանց գործարարները	5	
Ձեռներեցների գրանցման եւ լուծարման կարգը	4	
Գործարարներն են խանգարում մեկմեկու	3	
Շրջափակում	2	
Մարկետինգի եւ գովազդի անբավարար վիճակը	2	
Գների անկայունությունը	2	

Դավիթ Շահնազարյանը ոչ հերքեց, ոչ էլ հաստատեց Տեր-Պետրոսյան-Քոչարյան հանդիպման մասին լուրերը

ԵՐԵՎԱՆ, 10 ՀՈՒԼԻՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի հեռացման հարցը բացառապես ժամանակի խնդիր է: Նման հայտարարություն արեց Հայոց համազգային շարժման վարչության անդամ Դավիթ Շահնազարյանը հուլիսի 10-ին «Ազդակ» ակումբում կայացած հանդիպմանը: Ըստ նրա, հնարավոր է, որ իշխանափոխության գործընթացը «մի քիչ երկար» տեւի, սակայն «հանգուցալուծումն անխուսափելի է»: ՀՀՇ վարչության անդամի համոզմամբ, ընդդիմությունն ամենեւին էլ չի պարտվել, քանի որ իշխանափոխությունը «մեկ-երկու օրում կամ մի ամսում չի լինում, եւ այն, ինչ արդեն սկսվել է, այլեւս հետադարձ չունի»: Նրա խոսքերով, ՀՀՇ-ի դերն է աջակցել Հայաստանում օրինական իշխանության հաստատման համար մղվող ցանկացած գործընթացի: Դավիթ Շահնազարյանը նաեւ համոզմունք հայտնեց, որ այսօր հասարակության լայն շերտերը ոչ միայն գիտակցում են, այլեւ իրենց մաշկի վրա են զգում, որ «այս իշխանության հետ մենք ապագա չունենք»:

ՀՀՇ վարչության անդամը ոչ հերքեց եւ ոչ էլ հաստատեց մամուլում հրապարակված այն տեղեկությունը, թե նախկին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը վերջերս հանդիպել է Ռոբերտ Քոչարյանի հետ: Նա միայն հայտնեց, որ Տեր-Պետրոսյանը շարունակում է զբաղվել քաղաքականությամբ՝ «այլ հարց է, որ դա հրապարակային չէ»:

Կարլովի Վարիում հաղթեց իտալական կինոն

Սերգեյ Փարաջանովի 80-ամյակը նշվեց «Նռան գույն»-ի ցուցադրությամբ

ՀԱԿՈԲ ԱՍԼԱՆՅԱՆ
Կարլովի Վարի
հատուկ «Ազգ»-ի համար

Չեխական Կարլովի Վարիի 39-րդ միջազգային կինոփառատոնի ամենագլխավոր իրադարձությունը դարձավ ոչ թե բուն մրցույթն ու մրցանակաբաշխությունը, այլ ամերիկյան հայտնի կինովավերագրող, Կաննի միջազգային կինոփառատոնի Ոսկյա արմավենու դափնեկիր Մայքլ Մուրի «Ֆարենհայթ 9-11» ֆիլմի ցուցադրումը, որը հունիսի վերջի 3 օրերին միայն Հյուսիսային Ամերիկայում ցուցադրվել է 868 անգամ եւ ունեցել մոտ 25 միլիոն դոլարի եկամուտ: «Ֆարենհայթը» այս կինոփառատոնում ցուցադրված միակ ֆիլմն էր, որին նույնիսկ հավատարմագրված լրագրողներից ու բեմադրիչներից շատերը չկարողացան ներկա գտնվել՝ բոլոր տոմսերը վաճառված էին նախօրոք: «Հորիզոններ» բաժնում ցուցադրվող ֆիլմը հանդիսատեսը ընդունեց բուռն ծափահարություններով: Ֆիլմն ամբողջությամբ նվիրված է ԱՄՆ նախագահ Բուշի կեղծիքներով ընտրվելուց մինչեւ Իրաքի պատերազմը սանձազերծելու գաղտնիքներին, միջազգային ահաբեկիչների ու Բուշի ընտանիքի ունեցած կապերին, սեպտեմբերի 11-ի ահաբեկչությանն ու ամերիկյան հասարակական կարծիքին: Գնահատելի է, որ Միացյալ Նահանգներում է նկարահանվել նման խիզախ ու օբյեկտիվ կինոնկար, որը փորձում է տալիս հանրապետական վարչակազմի թույլ կողմերը եւ անձնական բիզնեսի բարգավաճման համար պատերազմներ հրահրելու քաղաքականությունը: Ի դեպ, եթե 2004-ի նախագահական ընտրությունների դեմոկրատ թեկնածու Քերին միայն զբաղվի «Ֆարենհայթի» ցուցադրությամբ, դա բավական կլինի համոզիչ հաղթանակ տանելու համար:

Մայքլ Մուր

Տես էջ 6

Սաակաշվիլին Լոնդոնում

Երեկ եռօրյա պաշտոնական այցով Լոնդոն մեկնեց Վրաստանի նախագահը: Նախորդ՝ Իրան պաշտոնական այցը Միխայիլ Սաակաշվիլին դադարեցրեց, երբ Թեհրանում տեղեկացավ Հարավային Օսիայում իրավիճակի խիստ լարվածության մասին: Մեծ Բրիտանիայում Վրաստանի նախագահը, ըստ BBC-ի, հանդիպումներ կունենա թագուհի Եղիսաբեթ Երկրորդի, վարչապետ Թոնի Բլերի հետ: Նախօրեին Սաակաշվիլին ասել է, որ Լոնդոնից աշխարհին կոչ կանի Հարավային Օսիայի մասին. «Ամբողջ աշխարհը պիտի իմանա, թե իրականում ինչ է կատարվում Ցխինվալի շրջանում»:

Ի դեպ, Լոնդոնում է գտնվում Ռուսաստանի պաշտպանության նախարարը: Սերգեյ Իվանովը վրաց-օսական լարվածության մեջ մեղադրել է Թբիլիսիին:

Փոքր բիզնեսի զարգացմանը խոչընդոտում են «չինովնիկների բյուրոկրատիզմը» եւ «կաշառակերությունը»

Իսկ շրջափակումը լուրջ խոչընդոտ չի համարվում

«Ազգի» ոլորտով անցկացրած այս հեռախոսային հարցմանը (տես էջ 1) մասնակցել են 500 ֆաղաքացիներ Երեւանի 4 համայնքներից (Կենտրոն, Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք): Թյուրըմբռնումներից զերծ մնալու համար նշենք, որ հարցվողները հնարավորություն ունեին տալու մի քանի պատասխաններ, ինչի պատճառով պատասխանների տոկոսային գումարը գերազանցում է 100 տոկոսը:

Ինչ եզրակացություններ կարելի է անել, վերլուծելով այդ պատասխանները: Առաջինն աչքի է ընկնում այն հանգամանքը, որ փոքր եւ միջին ձեռնարկատիրության (ՓՄՁ) զարգացման հիմնական խոչընդոտ մեր համաֆաղաքացիները համարում են իշխանություններին եւ նրանց ղեկավարած չինովնիկական համակարգը: Այսպես, 24,8 տոկոսը ՓՄՁ զարգացման գլխավոր խոչընդոտ է համարում չինովնիկների բյուրոկրատիզմը, 13,7 տոկոսը՝ հովանավորչությունը, 7 տոկոսը կաշառակերությունը, 5,4 տոկոսը՝ ղեկավարությունը: Հասկանալի է, որ հովանավորչությունը եւ կաշառակերությունը նույնպես չինովնիկներին եւ իշխանություն ունեցողներին է վերաբերում: Այսպիսով, փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման գլխավոր խոչընդոտն, ըստ պատասխանների ավելի քան 50 տոկոսի, նրանք են: Սա թերեւս գաղտնիք չէր, ինչին մեր թերթում բազմիցս ենք անդրադարձել: Մասնավորապես նշել ենք անհավասար մրցակցային դաշտի՝ մի կողմից հովանավորներ ունեցող խանութների եւ տոնավաճառների, մյուս կողմից հովանավորներ չունեցող առեւտրի օբյեկտների միջեւ, հարկային, մաքսային մարմինների, սոցիալական հիմնադրամի աշխատակիցների կողմից տնտեսվարողներին շանտաժի ենթարկելու եւ ի հաշիվ պետբյուջեի կաշառքներ պոկելու ու նմանատիպ այլ երեւույթների մասին: Սակայն առայժմ ապարդյուն: Բարձրագույն իշխանությունը կոռուպցիայի դեմ պայքարում է միայն տեսականորեն: Գործնական քայլերը սահմանափակվում են բարձրաստիճան պաշտոնյաների եւ հարկային ու մաքսային մարմինների աշխատակիցների աշխատավարձերը բարձրացնելով, որից միայն նրանց եկամուտներն են ավելանում, իսկ բյուրոկրատիզմը, այս առումով եւս պատասխանատուները իշխանություններն են, ընդ որում ինչպես օրենսդիր, այնպես էլ գործադիր, ֆանի որ առաջինը, հիմնականում առանց լրջորեն խորամուխ լինելու, հաստատում է երկրորդի ներկայացրած օրենքների նախագծերը: Որոշակի անհամաձայնություն կարելի է հայտնել «բարձր հարկերի» օգտին տրված պատասխանի կապակցությամբ, ֆանի որ այն արդյունք է գործարարների, գլխավորապես առեւտրականների՝ բարձր հարկերից մշտապես արտահայտվող դժգոհության, որը բնորոշ է զարգացման տարբեր մակարդակ ունեցող բոլոր երկրների բոլոր գործարարներին: Նման պատասխան տված մեր համաֆաղաքացիների ուշադրությունը կցանկանայինք հրավիրել այն փաստի վրա, որ չնայած գործարարների մշտական դժգոհությանը, նրանք հաջողությամբ շարունակում են այդ գործունեությամբ զբաղվել:

ՓՄՁ զարգացման լուրջ խոչընդոտներից մեկն է նշվել խոշոր բիզնեսը: Այս պատասխանը, կարելի է ասել, մասամբ է համապատասխանում իրականությանը: Իհարկե, խոշոր ընկերությունները եթե ոչ այլ մեթոդներով, ապա գոնե գնային ֆաղաքականությամբ կարող են ազդել փոքր եւ միջին ձեռնարկությունների գործունեության վրա: Սակայն ֆանի դեռ այդ ձեռնարկությունները փոքր են կամ միջին եւ լրջորեն չեն վտանգում այս կամ այն խոշոր ընկերության շահերը, վերջինս չի խանգարի նրանց: Այլ բան է, որ դա անմիջապես կարվի, երբ վերոնշյալ վտանգն ի հայտ գա:

Դժբախտաբար, այնպիսի կարեւոր գործոններ, ինչպիսիք են «սկզբնական գումարի բացակայությունը», «մարկետինգի եւ գովազդի անբավարար վիճակը», «ձեռներեցների ոչ բավարար գիտելիքները» եւ «վարկերի բարձր տոկոսները», այնքան էլ լուրջ խոչընդոտներ չեն համարվել: Մինչդեռ դրանք իսկապես այդպիսին են եւ շատ հաճախ պայմանավորված մեկը մյուսով:

Հետաքրքրական մեկ հանգամանք եւս: Ընդամենը երկու պատասխանում է որպես ՓՄՁ զարգացման խոչընդոտ նշվել շրջափակումը: Երեւի բոլորիս համար էլ ակնհայտ է, որ 10 տարի առաջ նման պատասխանը եթե ոչ առաջին, ապա հիմնականներից մեկը կլիներ: Ինչ մնում է ներկայումս տրված պատասխանին, ապա նույնպես որոշակի պարզաբանման կարիք է զգում: Շրջափակումը փոքր եւ միջին ձեռնարկատիրության զարգացման խոչընդոտ չհամարելը հետեւանք է այն բանի, որ նախ եւ առաջ աչքի են զարնում դրան նախորդող եւ հարցվածների նշած խոչընդոտները: Սակայն միանշանակ է, որ շրջափակումը շարունակում է էապես ազդել Հայաստանում ընդհանրապես տնտեսության եւ գործարարության զարգացման վրա:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



Առողջապահական օգնությունը Ղարաբաղին կկանոնակարգվի

Երկօրյա այցով Լեռնային Ղարաբաղում էր առողջապահության նախարար Նորայր Դավիդյանի գլխավորած պատվիրակությունը: Այցի նպատակը Ղարաբաղի եւ Հայաստանի բուժական ու առողջապահական կազմակերպությունների կապերի կանոնակարգումն է եւ այս կտրվածքով տարիներ ընդհատված համագործակցության վերականգնումը: Արցախի առողջապահական կառույցներն այսօր բազմաթիվ որոբլեմներ ունեն՝ բժշկական նորագույն տեխնիկայի բացակայությունը, կադրերի պակասը, դեղորայքային ապահովվածության ցածր մակարդակը: Հատկապես պատվաստանյութերի խիստ կարիք կա Ղարաբաղում: Հենց այս ընթացքում Ստեփանակերտում, ի դեպ, նաեւ Երեւանում, բավական տարածված են կարմրուկն ու կարմրախտը:

Իհարկե, հայաստանյան բուժհաստատություններից շատերը հնարավորության սահմաններում ցուցաբերել ու շարունակում են աջակցություն ցուցաբերել Ղարաբաղին, սակայն այդ օգնությունը կանոնակարգված չի եղել: Հայ առողջապահները այցելեցին Ստեփանակերտի կենտրոնական հիվանդանոց, ուր այդ օրը 7 ծնունդ գրանցվեց: Նախարարը խոստացավ էնդոլաբորատորիկ վիրաբուժական գործիքների հավաքածու նվիրաբերել հիվանդանոցին, որի կարիքն այստեղ խիստ զգացվում է: Պայմանավորվածություն եղավ արագնա վերապատրաստման դասախոսություններ կազմակերպելու մասին: Ղարաբաղցի բուժաշխատողները հարկադրված չեն լինի ժամանակ ու դրամ ծախսելով հասնել մայրաֆաղաք՝ ուսումնական դասընթացների: Ի դեպ, հենց նշված պատճառներով նրանք երկար տարիներ մայրաֆաղաք չեն գալիս:

Ինչպես տեղեկացանք նախարարի խորհրդական Ռուզանա Գետրգյանից, այն բոլոր հարցերն ու խնդիրները, որոնց լուծման մեջ Հայաստանը կարող է իր նպաստը բերել Ղարաբաղի առողջապահական կառույցներին, կհամակարգվեն, ու կանոնակարգված օգնության նախագիծ կմշակվի Ղարաբաղի համար: Ղարաբաղի առողջապահությունը ոչնչով չպետք է զիջի Հայաստանին, այս համոզմամբ ավարտվեց հայ առողջապահների այցը Ղարաբաղ:

Ա. Գ.

«ՎԵՏՈՅԻ» ԻՐԱՎՈՒՆՔ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԵՄ

Հաղթաթուղթը Հայաստանի ձեռքում է

Անդրադառնալով արտգործնախարար Վարդան Օսկանյանի վերջերս Մ. Նահանգներում կատարած հայտարարությանը, թե Հայաստանը կարող է օգտվել «վետոյի» իր իրավունքից եւ խոչընդոտել 2007 թ. Թուրքիայի ԵՄՀԿ նախագահող երկիր դառնալուն, «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ ՀԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆԸ գրում է Լոս Անջելեսից.

«Լրագրողների հետ հարց ու պատասխանի ժամանակ Հայաստանի արտգործնախարարը ռումբ պայթեցրեց հայտարարելով առաջին անգամ, որ Հայաստանը կօգտվի վետոյի իր իրավունքից, ֆանի որ Թուրքիան այդ մակարդակի, այդ բարձրության վրա չի գտնվում: «Թուրքիան միակ թեկնածուն է այդ տարվա համար: Նախագահող երկիրը որոշակի առավելություններ եւ իրավունքներ ունի, որոնք կարող են օգտագործվել Հայաստանի դեմ: Հաշվի առնելով անցած 12 տարիների ընթացքում տարածաշրջանի նկատմամբ նրանց (թուրքերի) ֆաղաքականությունը, որը չափազանց անհավատարակշիռ է եղել, եւ աներկդիմի պատասխանությունն ու զորակցությունն Ադրբեջանին, Հայաստանը պարզապես ու նոպինիսկ ցանկության դեպքում չի կարող մի ամբողջ տարի Թուրքիային որպես նախագահող երկրի տեսնել», ասված է նրա պատասխաններում:

Սա խիզախ որոշում է, որն, իմ կարծիքով, ճիշտ է: Մինչ նման որոշումները կարող են դուր չգալ ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք հավանաբար կփորձեն ճնշում բանեցնել եւ պահանջել, որ վերանայվի այդ որոշումը, եւ մինչ պետք է խուսափել Մ. Նահանգներին հակադրվելուց, այնուամենայնիվ, իմ կարծիքով, Հայաստանը պետք է որոշումներ ընդունի ելնելով իր եւ ոչ թե օտար մի երկրի (Մ. Նահանգների, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Չինաստանի կամ Թուրքիայի) ազգային շահերից:

Ամերիկահայ համայնքը պարտավոր է հակադրվել Բուշի վարչակազմի անդամներին, որոնք կփորձեն ճնշում բանեցնել Հայաստանի վրա: Հատկապես ընտրական այս տարում մենք մեր ամբողջ ուժը որպես ընտրազանգված պետք է գործի դնենք՝ հակադրվելու բոլոր նրանց, ովքեր մեզանից կպահանջեն լավություն անել Թուրքիային: Մենք այս հարցում ամոթ դիրքորոշում պետք է որդեգրենք: Հուսով ենք, Հայաստանի ղեկավարները 1999-ի սխալը չեն կրկնի:

Եթե Մ. Նահանգներն ու Թուրքիան իրոք ցանկանում են, որ վերջինս դառնա ԵԱՀԿ նախագահող երկիր, նրանք պետք է նախօրոք վերացնեն Հայաստանի շրջափակումը կամ ընդունեն Հայոց ցեղասպանությունը: Սա այն հազվադեպ դեպքերից է, երբ հաղթաթուղթը Հայաստանի ձեռքում է: Նա պետք է կարողանա առավելագույնս օգտագործել դա:

Մինսկի խումբը...

Սկիզբը էջ 1

Որեւէ մեկը կարո՞ղ է ասել, թե վերջին 10–12 տարիներին ղարաբաղյան կարգավորման միջնորդները ֆանի անգամ են եղել տարածաշրջանում: Դժվար թե: Բայց, օրինակ, ղարաբաղյան կարգավորման ռուսաստանցի նախկին բանագնաց Վլադիմիր Կազիմիրովը հաշվել է. անձամբ ինքը 47 անգամ ժամանել է տարածաշրջան: Համաձայնեք, այցերի թիվն այնքան էլ կարետոր չէ, ու եթե կարգավորման համար Մինսկի խումբը չի կարողանում Երեւանի, Ստեփանակերտի եւ Բաքվի համար ընդունելի տարբերակ առաջարկել, ապա հիմնական մեղավորները միջնորդները չեն:

Իրավամբ, դժվար է, անգամ անհնար, առաջարկել մի բանաձեւ, որը բոլոր երեք կողմերի, ինչպես նաեւ այս տարածաշրջանում շահեր հետապնդող եւ ազդեցություն ունեցող տերությունների համար ընդունելի լինի: Օրինակ, Բաքուն ոչ միայն պահանջում է (համենայն դեպս՝ հրապարակավ) իր իսկ սանձազերծած պատերազմի արդյունքում կորցրած շրջանները, այլեւ բուն Լեռնային Ղարաբաղը: Երեւանը հայտարարում է, որ Ղարաբաղը չի եղել եւ երբեք չի կարող լինել անկախ Ադրբեջանի կազմում: Ստեփանակերտի դիրքորոշումը համընկնում է Երեւանի դիրքորոշման հետ, տարաձայնությունները կարող են վերաբերել բանակցային գործընթացի մեթոդաբանությանը:

Համանախագահները, ինչպես նաեւ Մինսկի խմբում եռանախագահող պետությունները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը եւ Ֆրանսիան հայտարարում են, որ հակամարտող կողմերն իրենք պետք է լեզու գտնեն: Այսօր հայերի ու ադրբեջանցիների «լեզուները» տարբեր են, նրանք միմյանց չեն հասկանում: Մյուս կողմից պետք է նկատել, որ Մինսկի խմբի ներկայացրած առաջարկությունները 4 անգամ, թեկուզ վերապահումներով, ընդունելի են եղել հակամարտության երեք կողմերից առնվազն երկուսի համար:

1997 թ. հուլիսին «Ղարաբաղյան հակամարտության կարգավորման համապարփակ համաձայնագիրը», որն այլ կերպ անվանվում է փաթեթային տարբերակ, ընդունեցին Ադրբեջանն ու Հայաստանը, Ղարաբաղը մերժեց: Նույն տարվա դեկտեմբերի 2-ին Մինսկի խումբը ներկայացրեց նոր՝ փուլային տարբերակ՝ «Ղարաբաղյան զինված հակամարտության դադարեցման համաձայնագիր». կրկին Ադրբեջանն ու Հայաստանը համաձայնություն տվեցին, Ղարաբաղը մերժեց:

Այս երկու տարբերակներն էլ արդեն տպագրվել են մամուլում: Երկու դեպքում էլ Հայաստանը համաձայնում էր Ղարաբաղը թողնել Ադրբեջանի կազմում, ճիշտ է՝ ձեւականորեն, Լաչինի շրջանը, որով ապահովվում է Հայաստան-Ղարաբաղ ցամաքային կապը, սանում էր հատուկ կարգավիճակ, իսկ ղարաբաղյան ուժերի վերահսկողության տակ գտնվող բոլոր շրջանները վերադարձվում էին Ադրբեջանին, հատուկ կարգավիճակ էր սանում նաեւ Շուշին, որտեղ պիտի վերադառնային ադրբեջանցի փախստականները:

1998 թ. նոյեմբերի 10-ին Մինսկի խումբը նոր առաջարկ բերեց՝ «Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտության համապարփակ կարգավորման սկզբունքների մասին», կամ այսպես կոչված ընդհանուր պետության բանաձեւը: Չորրորդ առաջարկությունը կոչվում է Քի Վեսթի պայմանագիր: Եթե Հայաստանի առաջին նախագահի իշխանության տարիներին Երեւանն ու Բաքուն էին ընդունում միջնորդների առաջարկությունները, իսկ մերժող կողմը Ստեփանակերտն էր, ապա գործող նախագահի օրոք Երեւանն ու Ստեփանակերտն են վերապահումներով ընդունելի համարել, մինչդեռ մերժող կողմը Բաքուն է: Ուշագրավ է, որ համանախագահների ներկայացրած բոլոր չորս առաջարկներին միայն Երեւանն է կողմ եղել:

Ընդհանուր պետության բանաձեւը եւս տպագրվել է մամուլում, իսկ փաստաթղթային սկզբունքների հիման վրա ձեւավորված Քի Վեսթի պայմանագիրը մասամբ է գաղտնի: Հայտնի է, որ այդ պայմանագրով Ղարաբաղը դառնում էր Հայաստանի մի մասը: Ըստ որոշ տեղեկությունների, Հեյդար Ալիեւը համաձայնել էր ստորագրել Քի Վեսթի պայմանագիրը, սակայն վերջին պահին հրաժարվեց, ֆանի որ ներքաղաքական պայքարը կարող էր դառնալ անխուսափելի, ու դժվար է ասել՝ կհաջողվե՞ր նրան գահը փոխանցել որդուն:

Համանախագահներն այսօր Երեւանից կմեկնեն Ստեփանակերտ, ապա կրկին Երեւանով կուղեւորվեն Բաքու: Հավելենք նաեւ, որ արտգործնախարարներ Օսկանյանի եւ Մամեդյարովի հաջորդ հանդիպումը նախատեսված է սեպտեմբերին, Նյու Յորքում: Մինչ այդ, սեպտեմբերի կեսերին Քոչարյանն ու Ալիեւը կհանդիպեն Ասսանայում:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԲ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հանրապետության 47
Ֆաքս՝ 374 1 562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am

Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲՅԱՆ / հեռ. 529221

Լրագրողների սենյակ / հեռ. 581841

Հասցեագրատիրություն / հեռ. 582483

Շուրջօրյա չդադարող ծառայություն / հեռ. 529353

Համակարգչային շարվածքը «Ազգ» թերթի

Թերթի նյութերի ամբողջական թե մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռարձակությամբ առանց խմբագրության գրաւոր համաձայնության խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի

Նյութերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

Ընթացիկ

Բաղաքաշինության երեւի վերջին պահին միտքը փոխել էր, որովհետեւ կանխավ հայտարարված նրա մամլո ասուլիսի փոխարեն լրագրողների հետ հանդիպեց քաղաքաշինարանի շինարարության, կոմունալ տնտեսության ու բարեկարգման վարչության պետ Ասոն Սարգսյանը: Եվ քաղաքաշինարանի ընդարձակ դահլիճում լրագրողները սովորականից մի քանի անգամ շատ էին: Լրացել է Երվանդ Զախարյանի պաշտոնավարման 1 տարին, եւ արվածի ու չարվածի մասին էր լինելու խոսակցությունը:

Ասոն Սարգսյանը, հիմնականում զբաղվում է փողոցների ասֆալտապատման ու փոսերի լցման աշխատանքներով: Թերեւ ամենացավոն խնդիրներից մեկը մայրաքաղաքի համար: «Լինսի» հիմնադրամի օգնությամբ մայրաքաղաքի կենտրոնական հատվածները կարգի բերվեցին, բայց մնացած հատվածներում Երեւանը շարունակում է գավառական քաղաքի տպավորություն թողնել: Ասոն Սարգսյանը հավաստիացրեց, որ քաղաքաշինարանի ու քաղային համայնքների ուժերով շարունակվելու է փողոցների ասֆալտապատումը: Մինչեւ տարեվերջ նախատեսվում է ասֆալտապատել 250 հազար քառ. մ տարածք: Դրա համար առանձնացվել է 800 մլն դրամ: Առաջին կիսամյակի տվյալներով՝ արդեն իսկ հաջողվել է ասֆալտապատել 106 հազար քառ. մ փողոց: Զոմոտը, գազամատակարար կազմակերպությունները խոստացել են մինչեւ սեպտեմբեր վերացնել այն բոլոր խրամուղիները, որ սովորաբար իրենք թողնում են վթարների վերացումից հետո, եւ երկար ժամանակ նորոգում կամ չեն նորոգում: Ընդհանրապես մեր փողոցները 5 տարին մի անգամ կապիտալ նորոգումների պիտի ենթարկվեն, ինչը երբեւէ չի արվում: Պակասը լրացնում են վաղուց քայքայված գազատար, ջրատար, կոյուղատար խողովակների վթարները, որոնք վերացնելու համար հաճախ հարկ է լինում քանդել հենց նոր նորոգված փողոցը:

Եվ, իհարկե, Երեւանը երբեք ժամանակակից քաղաք չի դառնա մութ ու խավար փողոցների սարսափներով: Հատկապես կենտրոնից հեռու այդպիսի թաղամասերը շատ-շատ են: Մինչեւ տարեվերջ լուսավորված փողոցների թիվը կհասնի 63-ի (առայժմ 33-ն են լուսավորվել), դրանց հետ կլուսավորվեն 13 շենք-շինություններ ու 23 արձաններ:

Որպես մշտական պրոբլեմ շարունակում են մնալ վթարային շենքերը: Պետությունը չի հասցնում հասնել դրանց հետեւից, քանի որ ընթացիկ ու հիմնանորոգումների բացակայության պատճառով տարեցտարի ավելանում է քայքայվող շենքերի քանակը: Երրորդ աստիճանի վթարային շենքերի թիվը մայրաքաղաքում արդեն հասել է 88-ի: Եթե համայնքները կամ քաղաքաշինարանը չհաստատեն արագ լուծել խնդիրը, շատ շուտով դրանք կհամալրեն չորրորդ աստիճանի շենքերի ցանկը: Առայժմ ամրացումների ընթացքի մեջ են չորրորդ աստիճանի 4 վթարային շենքեր, եւս 3-ը մինչեւ տարեվերջ կամրացվեն: Ասոն Սարգսյանը նշեց, որ սեյսմակայունության գործոնը նկատի առնելով, լրացուցիչ ամրացումների պահանջներ են առաջադրվում նաեւ անավարտ շինարարական օբյեկտների նոր նախագծերին:

Հիմնանորոգումների հերթում վերջապես հայտնվել են նաեւ կամուրջներն ու կամրջային կառուցվածքները: Երեւանի մոտ 2 տասնյակ կամուրջները 60-ական, 70-ական թթ. կառույցներ են, դրանց կապիտալ նորոգումները հսկայական ծախսերի հետ են կապվում: Այս տարի նախատեսվում են ավարտել ընդամենը երկու՝ Գարեգին Նժդեհի ողջեսարի եւ Կիեւյան կամրջի նորոգումների համար անհրաժեշտ նախագծային ռասմնասիրությունները: Կիեւյան կամուրջը շահագործման օրից կապիտալ նորոգումների չի ենթարկվել: Մոտ 350 մլն դրամ է նախատեսվում կամրջի վերականգնման համար: Արդեն իսկ որոշակի աշխատանքներ կատարվել են՝ մարվել է կամարների մեջ տարիների ընթացքում կուտակված փոշին:

Ոչ միայն վարչության, այլեւ քաղային համայնքների համար առաջնային է դարձել բակերի բարեկարգման, դրանց լուսավորության, կանաչապատման, խաղահրապարակների կառուցման խնդիրը: Մամուլ սպրդած այն տեղեկությունը, թե բակերը աճուրդով վաճառվելու են, վարչության պետը ժխտեց: Բակերի վերաբերյալ այլ ծրագրեր կան: Դրանք հանձնվելու են համաշխարհային հանրությունների տնօրինությանը:

«Ազգի» հարցադրմանը, թե ինչ երաշխիք, որ բակերը համաշխարհայնացման հանձնելուց հետո դրանք իսկապես կբարեկարգվեն, երբ այս կառույցներն իրենք էլ չեն կարողանում կայանալ, Ասոն Սարգսյանը պատասխանեց. «Երաշխիքն այն է, որ այդ տարածքները համաշխարհայնացման են տրամադրվելու նախօրոք մշակված ճարտարապետական նախագծերով, որոնցում հիմնական շեշտադրումը լինելու է կանաչ գոտիների ու խաղահրապարակների կառուցումը: Եվ այսօր արդեն շատացել են դիմումները, որոնցով բնակչությունը խնդրում է բակային տարածքներ հատկացնել իրենց՝ զուտ կանաչապատման ու բարեկարգման համար»:

Լրացման կարգով հիշեցնենք, որ ժամանակին բազմաբնակարան շենքերի ճակատագիրը հանձնվեց համաշխարհայնացմանը, եւ հիմա այդ շենքերի տանիքները, վերելակները, մուտքերը, նկուղներն ու ինժեներական հաղորդակցման գծերը անհուսալի վիճակում են: Համաշխարհայնացումները ֆինանսներ չունեն, որովհետեւ անվճարունակ են բնակիչները: Իսկ եթե այդպես է, ապա բակերը ուղիղ գծով կանցնեն ոչ թե տեղական ինքնակառավարման այս չկայացած օղակներին, այլ առանձին անհատների տնօրինությանը:

ԿԱՐԵՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ

Բակերի ճակատագիրը կտնօրինեն համաշխարհայնացումները

Ինչպես, ինչպես եւ ամեն երկուշաբթի, կոմունալ վարչության պետը նախ ներկայացրեց առկա խնդիրները, դրանց վերաբերյալ ծրագրերի կատարման ընթացքը: Իհարկե, չկարողացավ խուսափել կրկնություններից, որովհետեւ յուրաքանչյուր թեմայի շուրջ քաղաքաշինարանի ամենշաբաթյա ասուլիսներում առնվազն 3-4 անգամ արդեն խոսվել է:

Ուրախալի, որ ղեկավարում է Ասոն Սարգսյանը, հիմնականում զբաղվում է փողոցների ասֆալտապատման ու փոսերի լցման աշխատանքներով: Թերեւս ամենացավոն խնդիրներից մեկը մայրաքաղաքի համար: «Լինսի» հիմնադրամի օգնությամբ մայրաքաղաքի կենտրոնական հատվածները կարգի բերվեցին, բայց մնացած հատվածներում Երեւանը շարունակում է գավառական քաղաքի տպավորություն թողնել: Ասոն Սարգսյանը հավաստիացրեց, որ քաղաքաշինարանի ու քաղային համայնքների ուժերով շարունակվելու է փողոցների ասֆալտապատումը: Մինչեւ տարեվերջ նախատեսվում է ասֆալտապատել 250 հազար քառ. մ տարածք: Դրա համար առանձնացվել է 800 մլն դրամ: Առաջին կիսամյակի տվյալներով՝ արդեն իսկ հաջողվել է ասֆալտապատել 106 հազար քառ. մ փողոց: Զոմոտը, գազամատակարար կազմակերպությունները խոստացել են մինչեւ սեպտեմբեր վերացնել այն բոլոր խրամուղիները, որ սովորաբար իրենք թողնում են վթարների վերացումից հետո, եւ երկար ժամանակ նորոգում կամ չեն նորոգում: Ընդհանրապես մեր փողոցները 5 տարին մի անգամ կապիտալ նորոգումների պիտի ենթարկվեն, ինչը երբեւէ չի արվում: Պակասը լրացնում են վաղուց քայքայված գազատար, ջրատար, կոյուղատար խողովակների վթարները, որոնք վերացնելու համար հաճախ հարկ է լինում քանդել հենց նոր նորոգված փողոցը:

Եվ, իհարկե, Երեւանը երբեք ժամանակակից քաղաք չի դառնա մութ ու խավար փողոցների սարսափներով: Հատկապես կենտրոնից հեռու այդպիսի թաղամասերը շատ-շատ են: Մինչեւ տարեվերջ լուսավորված փողոցների թիվը կհասնի 63-ի (առայժմ 33-ն են լուսավորվել), դրանց հետ կլուսավորվեն 13 շենք-շինություններ ու 23 արձաններ:

Որպես մշտական պրոբլեմ շարունակում են մնալ վթարային շենքերը: Պետությունը չի հասցնում հասնել դրանց հետեւից, քանի որ ընթացիկ ու հիմնանորոգումների բացակայության պատճառով տարեցտարի ավելանում է քայքայվող շենքերի քանակը: Երրորդ աստիճանի վթարային շենքերի թիվը մայրաքաղաքում արդեն հասել է 88-ի: Եթե համայնքները կամ քաղաքաշինարանը չհաստատեն արագ լուծել խնդիրը, շատ շուտով դրանք կհամալրեն չորրորդ աստիճանի շենքերի ցանկը: Առայժմ ամրացումների ընթացքի մեջ են չորրորդ աստիճանի 4 վթարային շենքեր, եւս 3-ը մինչեւ տարեվերջ կամրացվեն: Ասոն Սարգսյանը նշեց, որ սեյսմակայունության գործոնը նկատի առնելով, լրացուցիչ ամրացումների պահանջներ են առաջադրվում նաեւ անավարտ շինարարական օբյեկտների նոր նախագծերին:

Հիմնանորոգումների հերթում վերջապես հայտնվել են նաեւ կամուրջներն ու կամրջային կառուցվածքները: Երեւանի մոտ 2 տասնյակ կամուրջները 60-ական, 70-ական թթ. կառույցներ են, դրանց կապիտալ նորոգումները հսկայական ծախսերի հետ են կապվում: Այս տարի նախատեսվում են ավարտել ընդամենը երկու՝ Գարեգին Նժդեհի ողջեսարի եւ Կիեւյան կամրջի նորոգումների համար անհրաժեշտ նախագծային ռասմնասիրությունները: Կիեւյան կամուրջը շահագործման օրից կապիտալ նորոգումների չի ենթարկվել: Մոտ 350 մլն դրամ է նախատեսվում կամրջի վերականգնման համար: Արդեն իսկ որոշակի աշխատանքներ կատարվել են՝ մարվել է կամարների մեջ տարիների ընթացքում կուտակված փոշին:

Ոչ միայն վարչության, այլեւ քաղային համայնքների համար առաջնային է դարձել բակերի բարեկարգման, դրանց լուսավորության, կանաչապատման, խաղահրապարակների կառուցման խնդիրը: Մամուլ սպրդած այն տեղեկությունը, թե բակերը աճուրդով վաճառվելու են, վարչության պետը ժխտեց: Բակերի վերաբերյալ այլ ծրագրեր կան: Դրանք հանձնվելու են համաշխարհայնացման:

«Ազգի» հարցադրմանը, թե ինչ երաշխիք, որ բակերը համաշխարհայնացումներին հանձնելուց հետո դրանք իսկապես կբարեկարգվեն, երբ այս կառույցներն իրենք էլ չեն կարողանում կայանալ, Ասոն Սարգսյանը պատասխանեց. «Երաշխիքն այն է, որ այդ տարածքները համաշխարհայնացման են տրամադրվելու նախօրոք մշակված ճարտարապետական նախագծերով, որոնցում հիմնական շեշտադրումը լինելու է կանաչ գոտիների ու խաղահրապարակների կառուցումը: Եվ այսօր արդեն շատացել են դիմումները, որոնցով բնակչությունը խնդրում է բակային տարածքներ հատկացնել իրենց՝ զուտ կանաչապատման ու բարեկարգման համար»:

Լրացման կարգով հիշեցնենք, որ ժամանակին բազմաբնակարան շենքերի ճակատագիրը հանձնվեց համաշխարհայնացմանը, եւ հիմա այդ շենքերի տանիքները, վերելակները, մուտքերը, նկուղներն ու ինժեներական հաղորդակցման գծերը անհուսալի վիճակում են: Համաշխարհայնացումները ֆինանսներ չունեն, որովհետեւ անվճարունակ են բնակիչները: Իսկ եթե այդպես է, ապա բակերը ուղիղ գծով կանցնեն ոչ թե տեղական ինքնակառավարման այս չկայացած օղակներին, այլ առանձին անհատների տնօրինությանը:

ԿԱՐԵՆ ՂԱՆԴԻԼՅԱՆ

«Արմենտելի» այս հակամարտությունը «Ազատ Հայք առաքելություն» կուսակցության հետ է

Հեռահաղորդակցության սեփականատեր «Արմենտել» ընկերության առաջացրած խնդիրների մասին բազմիցս ենք նշել: Կլուծվե՞ն դրանք մինչեւ սեպտեմբերի 28-ը՝ մինչեւ կառավարության հետ եռամսյա նոր բանակցությունների ժամկետի ավարտը: Դժվար է այս առնչությամբ որեւէ կանխատեսում կատարելը: Իսկ մինչ այդ ընկերության մատուցած տհաճ անակնկալները չեն նվազում: Դրանցից մեկն էլ անցյալ տարեվերջին բաժին հասավ «Ազատ Հայք առաքելություն» կուսակցությանը, որն այդ կապակցությամբ արդեն դատական գործընթաց է սկսել: Այդ մասին տեղեկացանք կուսակցության ղեկավար Ռուբեն Մնացականյանից:

Անցյալ տարվա հոկտեմբերի 15-ին վերոնշյալ կուսակցության կառավարող մարմինը որոշում էր ընդունել արտահերթ ընդհանուր ժողով գումարել նոյեմբերի 7-ին: Սակայն ընդհանուր ժողովը սկսելուց 8 օր առաջ 7 օր անընդմեջ անջատվել է կուսակցության ղեկավարի հեռախոսակապը, ինչի պատճառով հնարավոր չեղավ ժողովի մասին տեղեկացնել մարզերում գտնվող կուսակցության տարածքային մարմիններին: Քվորումը չապահովվեց, եւ ընդհանուր ժողովը տեղի չունեցավ: Դա պատճառ դարձավ, որ «Ազատ Հայք առաքելությունը» չհաստատեց վերագրանցվել:

Ի պատասխան Ռուբեն Մնացականյանի հարցման, որտեղ նա թվարկում էր այն վնասները, որոնք պատճառել էր «Արմենտելը» կուսակցությանը, վերջինիս գլխավոր տնօրենը պատասխանել է, որ չափազանց 7 օրվա վարձը պակաս կգանձվի: Ընդսմին, ընկերությունը չի ցանկացել տրամադրել վերծանման թերթիկը: Մյուս, այդ թվում գումարային պահանջներին «Արմենտելի» ղեկավարությունը չի համաձայնել: Մինչդեռ, ըստ Ռուբեն Մնացականյանի, կուսակցությունը հազարավոր դոլարների վնասներ է կրել ընդհանուր ժողովի կազմակերպման եւ տապալման, որպես դրա հետեւանք չվերագրանցվելու, խորհրդարանական եւ նախագահական ընտրություններին չմասնակցելու պատճառով: Ելնելով այդ հանգամանքներից, քաղաքից է ներկայացվել Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարան:

Նկատի ունենալով, որ «Արմենտելը» խախտել է հեռակապի ծառայությունների մատուցման կանոնները, չի ամրագրել հեռախոսակապի խափանման օրն ու ժամը, բաժանորդներին չի տեղեկացրել կապի խափանման մասին, խափանման դեպքում ելից զանգերի վերծանման թերթիկներում ճիշտ չի վերահաշվարկել, պահպանել է բջջային եւ միջքաղաքային զանգերի միայն 3 ամսվա տվյալները եւ մի շարք այլ հանգամանքներ, «Արմենտելից» պահանջել է հրապարակայնորեն ներողություն խնդրել «Ազատ Հայք առաքելություն» կուսակցությունից եւ Ռուբեն Մնացականյանին տրամադրել 2003 թ. սեպտեմբերից ի վեր իր կատարած զանգերի վերծանման թերթիկները:

Ռուբեն Մնացականյանը նշում է, որ «Արմենտելը», հեռախոսակապի ընդհատման դեպքում, ըստ հեռակապի ծառայությունների կանոնների թ. 55 կետի, պարտավոր է 1 օրվա ընթացքում տեղյակ պահել բաժանորդին, ամրագրել խափանման օրը, ժամը եւ բաժանորդային սարքի անգործության յուրաքանչյուր օրվա համար կատարել բաժանորդային վարձի պակասեցում: Դա չի կատարվել: Ըստ 98 կետի, վթարը պետք է վերացվեր առնվազն 5 օրում: Այս դեպքում հեռախոսը չի աշխատել 7 օր:

Թե ինչով կավարտվի «Արմենտելի» հետ հերթական հակամարտությունը, այս անգամ քաղաքական կուսակցության հետ, կիմանանք հուլիսի 22-ին, երբ նշանակված է դատական գործի լսումը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՈՒՍՈՒՆՈՂԱԿԱՆ ՊՐՈՍՊԵԿՏԻՎ

Կարմրուկը գլուխ է բարձրացրել Թալինում

Վերջին երկու-երեք շաբաթվա ընթացքում Արագածոտնի մարզի մի շարք գյուղերում եւ հատկապես Թալին քաղաքում գլուխ է բարձրացրել կարմրուկ հիվանդությունը: Մասնագետներից մի քանիսի տվյալներով, այն փոքր-ինչ տարբերվում է միշտ հանդիպող կարմրուկից, չնայած տարածվում է նույն օդակաթիլային ճանապարհով: Մանկական կոնսուլտացիայի բաժնի պատասխանատուների բուժքույր Մայրանուշ Կիրակոսյանն ասաց, որ Թալինում պատվաստվել են 18 տարեկանից մինչեւ 30 տարեկան բոլոր նրանք, ովքեր ընդհանրապես չեն հիվանդացել կարմրուկով (հնարավոր է, որ հիվանդությունը կրկնվի), իսկ 30 տարեկանից մեծերը չեն պատվաստվում դեղորայքի պակասի պատճառով: Ինֆեկցիոն բաժնի ավագ քույր Սուսաննա Գետոյանի խոսքերով. «Իմ ամբողջ աշխատանքային փորձի ընթացքում առնվազն 20 տարի ես երբեք չեմ նկատել, որ Թալինում կարմրուկն այսքան տարածված լինի, այն էլ այսպիսի բարդացումներով»: Սուսաննա Գետոյանից տեղեկացանք նաեւ, որ քթի արյունահոսությամբ Գառնահովիտից եւ Արտենիից ծանր դեպքերով հիվանդանոց են տեղափոխվել Գրիգորյան Բերունյան եւ Քեթեւանյան Սոնան: Այժմ նրանց դեպքերը կայուն է, եւ մեր հիվանդանոց այցելելու օրը նրանց դուրս էին գրել:

Այն հարցին, թե ինչով են տարբերվում ներկայումս գրանցված կարմրուկի դեպքերը նախկին տարիների դեպքերից, պատասխանեց ինֆեկցիոն բաժնի բժշկուհի Նինա Միքայելյանը. «Կարմրուկի նշանները ի հայտ են գալիս ընդհանրապես հիվանդության ծաղկման շրջանից մի քանի օր առաջ, որի ընթացքում կտրուկ բարձրանում է ջերմաստիճանը եւ իջնում այն ժամանակ, երբ մարմնի վրա հայտնվում են կարմրուկի նշանները: Այս դեպքում ջերմաստիճանը պահպանվում է բավական երկար ժամանակ (38-39 աստիճան), նաեւ ուղեկցվում է թոքաբորբով, ականջի բորբոքումով, քթի արյունահոսությամբ եւ փորկապությամբ»: Սվելի ծանր բարդացումներով այս հիվանդությունը տանում են 35-ից բարձր տարիք ունեցողները: Կարմրուկից խուսափելու եւ առավելագույնս պաշտպանվելու համար, բժիշկների հավաստմամբ, հարկավոր է պարտադիր պատվաստում:

ԲՐԻՍՏԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԵՊՀ մանկաբուժական ֆակուլտետի 1-ին կուրս

Անալգինը վնասակար է, բայց՝ էժան

Վերջերս հայկական մամուլում առողջապահության ոլորտի մի շարք մասնագետներ հայտարարեցին, որ անալգինը շատ վնասակար է օրգանիզմի համար եւ անհրաժեշտ է եթե ոչ արգելել, ապա գոնե սահմանափակել դրա օգտագործումը: Արեւմուտքում վաղուց իբրեւ ցավազրկող միջոց անալգինը չի կիրառվում, մինչդեռ Հայաստանում շարունակում է լայնորեն կիրառվել, որի պատճառը, ըստ մասնագետների, ինֆորմացիայի պակասն է:

Անալգինի վնասակարության մասին տեղեկացվածության աստիճանը պարզելու համար այցելեցինք հանրապետության մի շարք դեղատներ: Պարզվեց, որ դեղատների աշխատողները գիտեն անալգինի վնասակարության մասին եւ այդ մասին նույնիսկ զգուշացնում են տարեցներին, բայց, ինչպես նշեց դեղատներից մեկի տնօրեն Վահագն Ֆալաֆյանը. «Ոչ ոք էժան անալգինը թողած՝ եռակի թանկ դեղը չի առնի, ուստի եթե կա պահանջարկ, կա նաեւ առաջարկ: Բացի դրանից, եթե ուզում են արգելել անալգինի կիրառումը, պիտի նախ արգելել նրա ներկրումը»:

«Հնարավո՞ր է արդյոք Հայաստանում ընդհանրապես արգելել անալգինի գործածությունը» հարցին «Դեղագործություն» ՓԲԸ դեղաբանական հանձնաժողովի նախագահ Էլմիրա Ամոյանը պատասխանեց. «Արգելելու մասին խոսք չկա, խոսք կա սահմանափակելու մասին. կոնկրետ սրսկման լուծույթի առումով սահմանափակվել են ցուցումները»: Ինչ վերաբերում է ցուցումներին, դրանք 2-ն են.

1. անալգինն օգտագործել խիստ բարձր ջերմաստիճանի դեպքում (40 աստիճանից բարձր).

2. անալգինն օգտագործել ուռուցքային հիվանդությունների դեպքում, այն էլ այլ դեղերի հետ համադրելով, եւ վերջին փուլում՝ ցավերը մեղմելու համար:

Նա առաջարկեց անալգինը փոխարինել պակաս դոզա ունեցող կամ էլ համակցված դեղերով, թեեւ նշեց, որ մյուս դեղերն էլ ունեն իրենց կողմնակի բացասական ազդեցությունները:

ԱՐՈՒՍՅԱԿ ՊԱՍՅԱՆ
ԲՐԻՍՏԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԵՊՀ մանկաբուժական ֆակուլտետ

Հայաստանում արդեն բացվել է «Կիլիկյան Հայաստան» համալսարանը

Մեր թերթի ուրբաթ օրվա համարում տպագրել էինք գրողների համահայկական երկրորդ համաժողովին մասնակցող մի խումբ սփյուռքահայ գրողների առաջարկը Հայաստանում արեւմտահայ մանկավարժական ինստիտուտ հիմնելու վերաբերյալ, որը նրանք հղել էին հանրապետության նախագահին, ԱԺ նախագահին, վարչապետին, արտգործնախարարին, կրթության ու գիտության նախարարին:

Խմբագրություն այցելեց «Կիլիկյան Հայաստան» կրթամշակութային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Հովհաննիսյանը՝ մեզ տեղեկացնելու, որ կրթության նախարարի հրամանով սույն թվի հունիսի 6-ից հիմնադրամը ստացել է կրթական գործունեության լիցենզիա: Կենտրոնի նպատակն է խորացնել Հայաստան-Արցախ-սփյուռք կրթամշակութային համագործակցությունը, օգնել սփյուռքի դպրոցներին, նպաստել հայապահպանմանը: Սփյուռքի հայկական դպրոցները բարձրորակ մանկավարժական կադրերով ապահովելու համար «Կիլիկյան Հայաստան» համալսարանն արդեն 2004-2005 թթ. ուսումնական տարվա ընդունելություն է հայտարարել հայոց լեզու եւ գրականության, պատմության, տարրական կրթության եւ մանկավարժության, նախադպրոցական մանկավարժության եւ հոգեբանության, երաժշտական կրթության ֆակուլտետներում:

Նրա ասելով, ընդունելության հայտարարությունն արդեն տպագրվել է սփյուռքյան մի շարք թերթերում: Ընդունելության տեղերի 75 տոկոսը կհատկացվի սփյուռքի ազգային ու միութենական, իսկ 25 տոկոսը՝ Հայաստանի դպրոցների շրջանավարտներին:

Ուսանողները կուսումնասիրեն արեւմտահայերեն եւ արեւելահայերեն, ռուսաց լեզու եւ մեկ եվրոպական լեզու, կստիպեն համակարգչային ծրագրերի, իսկ երաժշտության բաժին ընդունվողները պետք է ունենան երաժշտական նախնական կրթություն: Ուսանողների ընդունելությունը կկատարվի Ջավախքում, Բեյրութում, Հալեպում, Թեհրանում, Երեւանում:

Ռ. Պ.

Ո՞ւմ է ձեռնտու Մելգոնյանը փակելը

Կիպրական կառավարությունը «թշնամական արարք» է համարում այդ քայլը

Բազմաթիվ տիյուտահայ գողների, հրադարակախոսների եւ հասարակական գործիչների թվում գողների համահայկական երկրորդ համաժողովին մասնակցում էր նաեւ վեցերորդ լուսագրող, Կիպրոսի «Սայփրս ուիրլի» անգլիագիր օրաթերթի բազմամյա խմբագիր Ջորջ Տեր-Բարթողը, որն «Ազգ»-ի խմբագրություն այցելելով հուլիսի 6-ին մեզ տրամադրեց հետեւյալ հոդվածը՝ ընդհանրապես Մելգոնյան կրթական հաստատության (ՄԿՀ) ճակատագրի եւ մասնավորապես դրա շուրջը կատարվող վերջին իրադարձությունների վերաբերյալ:

Նախ ասեմ, որ գողների համաժողովն ինձ համար մութ սենյակի բացված պատուհանի նման մի բան էր: Առաջին անգամ լսեցի հայ գողների եւ բանաստեղծների արտահայտած գաղափարները զանազան նյութերի շուրջ: Ներկա եղա վիճաբանությունների, դիտարկումների փոխանակմանը: Հաճելի առիթ էր հանդիպելու ծանոթ անունների աշխարհի տարբեր անկյուններից եւ հաստատելու նոր մտերմություններ անծանոթների հետ:

Ինչ վերաբերում է ՄԿՀ-ն փակելու ՀԲԸՄ-ի միակողմանի որոշմանը, ինչպես համաժողովում իմ հակիրճ զեկուցման մեջ նշեցի, Կիպրոսի կառավարությունն այդ քայլը «թշնամական արարք» կնկատե, որովհետեւ ըստ նրա, ՄԿՀ-ն ոչ միայն կիպրահայության, այլեւ ամբողջ Կիպրոսի ուսման եւ մշակույթի խորհրդանիշն է: «Հայ համայնքը մեր անբաժանելի մասն է, եւ մենք չենք կարող թույլ տալ, որ օտար երկրից միակողմանի որոշումով հայերի իրավունքները զոհաբերվեն նյութական խորանին առջեւ», հայտարարեցին կառավարության անդամները:

Կիպրոսի ներքին գործերի նախարարության 2-ի թիւ 3829 հրամանով՝ ելնելով հաղթաթղթության օրենքի 38-դ հոդվածի առաջին պարբերության պահանջներից, Մելգոնյանի հին շենքերը, բարերարների վիլլան եւ շրջակա անտառը հռչակված են «պետության կողմից պաշտպանված կրթական, մշակութային եւ պատմական կալվածներ»: Հատկանշական է նման որոշում ընդունելու հիմք ծառայած պատճառներից երրորդը, որտեղ ասվում է. «Այս (ճարտարապետական) նմուշները պահպանելու անհրաժեշտությունը, որովհետեւ նրանք կազմում են գլխավոր կենդանի կապը մեր անցյալի, մասնավորապես մեր հաղթաթղթության, ճարտարապետության, տոնական, պատմական եւ մշակութային անցյալի հետ»: Հատկանշական նաեւ այստեղ «մեր» բառն է, որը նշանակում է, թե Մելգոնյանը դիտվում է ոչ որպես զուտ հայկական, այլ համակիպրական կառույց:

Հարցը քննարկվեց նաեւ Կիպրոսի Ներկայացուցիչների պալատի պլենար նիստում մարտի 26-ին, որտեղ միաձայն ընդունված որոշման մեջ փակման վերաբերյալ մտահոգություն արտահայտելուց, ՄԿՀ-ն ոչ միայն հայկական, այլեւ ամբողջ Կիպրոսի պատմամշակութային ժառանգության անհակտելի մասը համարելուց եւ ՄԿՀ-ին հատկացված պետական նյութական օժանդակությունը տարեկան մինչեւ 300 հազար դոլարի հասցնելու Կիպրոսի կառավարության պատասխանությունը նշելուց հետո դատարկվում է Մելգոնյան երաշխիքների կտակի օգտագործումը փոփոխելու ցանկացած մտադրություն եւ անընդունելի համարվում կիպրական հողի վրա հայկական կրթական ավանդույթների խմահաճ եւ միակողմանի ոտնահարումը: Որոշումը կոչ է անում ՀԲԸՄ-ի կենտրոնական վարչությանը՝ վերանայել իր դիրքորոշումը, հաշվի առնել Կիպրոսի հայկական համայնքի, շահագրգիռ կողմերի՝ ուսուցիչների, ծնողների, ուսանողների, շրջանավարտների, ինչպես նաեւ կիպրական իշխանությունների պատճառաբանությունները սույն հարցի վերաբերյալ եւ նպաստել գործնական լուծում գտնելու ջանքերին:

Մելգոնյան կրթական հաստատությունը գոցելու եւ ծախելու հարցը ահռելի մտահոգության մատնած է ամբողջ կիպրահայությանը եւ Միջին Արեւելքի հայությանը: «Սայփրս մեյլ» կիպրական թերթի հունիսի 19-ի համարում լուսագրող Ժան Խրիստոն «Մելգոնյանի ծնողները լիված ծանր դրության մեջ» խորագրի ներքո գրում է, որ ծնողները հուսախաբ էին եղել, երբ առաջին դասարանցիներին արձանագրելուց հետո (կիպրական թերթերում համարյա ամսախսան հայտարարություններ կարդալուց հետո) դադրեցրեցին իրենց հայտնել էին, որ արձանագրությունները չեղյալ են համարվում, ընդունելություն չի լինելու: «Ինչ է պատահելու ինձ հետ», հարցնում էր թերթի նկարում հայտնված դիմորը: Կիպրահայ եւ լիբանանահայ ծնողներ դիմեցին Կիպրոսի կրթության նախարարությանը՝ Նրանք հատկապես նախարարության ուշադրությանն էին հանձնում այն փաստը, որ վերջին շրջանում ՀԲԸՄ-ի ներկայացուցիչ Գորդոն Անդերսոնի օգնականները դիտավորյալ զանգահարում էին տները եւ հորդորում գավակներին ոտիճ դրոցում արձանագրել, որպեսզի կարողանան պնդել, որ արձանագրվողներ չկան կամ շատ քիչ են: Ընդհանրապես ՀԲԸՄ-ի թափուն, միակողմանի գործելու երեւույթն է խիստ դատապարտելի: Նախ հերքեցին փակելու կամ ծախելու վերաբերյալ «ասեկոսեները», հետո հայտարարեցին, որ փակելու են միայն վարժարանի գիշերօթիկ բաժինը, որը կազմում է ուսանողների 75 տոկոսը: Ինչպե՞ս կարելի է ակնկալել, որ վարժարանը շարունակի գործել ընդամենը 50 ուսանողներով (այժմյան 210-ի փոխարեն): Իսկ դրանից առաջ՝ անցյալ տարի կարիքավոր ուսանողների թոշակները կրճատելով, նրանք 260-ից 210-ի նվազեցրին ուսանողների քանակը, որպեսզի հետագայում պնդեն, որ բավականաչափ ուսանողներ չկան վարժարանում, հետեւաբար նրա գոյությունն արդարացված չէ: Ավելին, նրանք հայտարարեցին, որ ուսուցչական կազմը բավականաչափ որակավորված չէ ժամանակակից գիտական մակարդակ ապահովելու համար, բայց ուսուցիչների մայիսի 27-ի գործադուլին անմիջապես նույն օրը արձագանքեցին ուսուցչական կազմին ուղղված մի նամակով, որտեղ դրվատանքի խոսքեր կան այդ նույն ուսուցիչների հասցեին:

«Դուք շատ ժամանակ եւ եռանդ եք ներդրել տարբեր մակարդակների տեր հայ ուսանողներին տալու այն պատրաստվածությունը, որ նրանք եռագում էին ձեռք բերել հայկական եւ օտար ուսումնական ծրագրերի բնագավառներում: Ձեր անդուլ ջանքերը մեծապես գնահատում ենք եւ համոզված ենք, որ դուք ձեր կարելին արել եք զարկ տալու եւ բարելավելու ուսումնառության ընթացքը», գրված է այնտեղ:

Մեկ նկատառում եւս. երբ պարզաբանումներ սպանալու համար կիպրահայ համայնքի ներկայացուցիչներ Պետրոս Գալայճյանը (խորհրդարանի հայ պատգամավոր), դոկտ. Ագատի Էֆմեթյանը (ՄԿՀ-ի նախկին տնօրենուհի) եւ Հրաչ Մանուկյանը (Մելգոնյան առեւտրային կենտրոնի պատասխանատու) մեկնեցին Նյու Յորք՝ հանդիպելու կենտրոնական վարչության անդամների հետ, վերջիններս նրանց ընդամենը կես ժամվա ընդունելություն «շնորհեցին»: Օշեմ, որ նույն առեւտրային կենտրոնը (զանազան ընկերությունների կամ կազմակերպությունների վարձով տվող գրասենյակներ) ստեղծված էր եկամուտ բերելու եւ այդ եկամտով ՄԿՀ-ի կարիքները հոգալու նպատակով: Սակայն վերջերս միայն պարզվեց, որ գումարն ամբողջությամբ ՀԲԸՄ-ի կենտրոն փոխանցվելուց հետո, փոխանակ որպես գրանտ դարձյալ Մելգոնյանին հատկացվելու, տվում էր որպես վարկ, այսինքն պարտքով տված գումար: Այս մասին տեղյակ էր եղել միայն գլխավոր հաշվապահը:

Ինչ վերաբերում է ուսանողների առաջադիմությանը, արդա անցյալ տարվա GCSE-ի՝ ընդհանուր կրթության վկայականի քննությանց արդյունքներով 13 տոկոսով ավելի բարձր է, քան Մեծ Բրիտանիայի ուսանողների արդյունքները:

Նույնիսկ ծախսերի վերաբերյալ բերված պատճառաբանությունները չեն դիմանում քննադատության: Վարժարանի ծախսերը եթե շատ են, կարելի է կրճատել: Միջոցներ կան: Մինչդեռ կենտրոնական վարչությունը ինքը մեծ գումարներ է ծախսում Կիպրոսի հունարեն եւ անգլերեն լրագրերի մեջ մեծաքանակ (մեկ էջանոց) հայտարարություններ տալով, որոնցում, ինքնիշխանորեն, գրված է, որ հայերը պետք է իրենց գտնված երկրների մեջ ձուլվեն տեղացիներին: Կիպրոսի հեռուստատեսությամբ ելույթ ունենալով, ՀԲԸՄ-ի ներկայացուցիչ Գորդոնի օգնականներից մեկն ավելի առաջ գնալով հայտարարեց. «Հայերը թող իրենց գավակներին ուսման տան իրենց երկրներում: Այստեղ եկողները խնդիրներ են ունենում»: Ինչպիսի՞ ամոթալի պատգամներ:

Ընդվզումի ալիքը համակած է բոլորին, ընդհուպ վարժարանի տնօրենուհուն՝ տիկին Անի Լաչինյանին, որն, իմ տեղեկությունների համաձայն, արդեն իսկ հրաժարական է տվել, բայց կենտրոնական վարչությունը չի ընդունել նրա հրաժարականը:

Վարժարանի Սանուց միությունն անդուլ պայքար է մղում փրկելու համար Եվրոպայում միակ բարձրագույն հայկական վարժարանը: Անհրաժեշտության դեպքում հարցը վճռվելու է դատարանի միջամտությամբ: Հայ եւ հույն համայնքների բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց պատրաստակամությունն են հայտնել նյութական լուրջ օժանդակություններով նեցուկ կանգնել հաստատության փակման դեմ պայքարողներին: Ի դեպ, հունական շրջանակներում ընդվզումն արդարացիորեն զուգակցվում է նաեւ զարմանքով: «Այն, ինչ թուրքը չկարողացավ անել, դո՞ւմ եք հիմա ուզում անել», հարցնում են նրանք ամոթի անհրեւակայելի զգացումով պատելով մեզ՝ հայերիս: Եվ սա մեր օրերում, երբ Սանուց միությունը, հավատարիմ վարժարանի ոչ միայն որպես կրթարան, այլեւ տաղնապալի ժամանակներում որպես ապաստան ծառայելու առաքելությանը, պատրաստվում էր Իրաքից ուսանողներ ընդգրկել իր դիմորդների շարքերում:

Մելգոնյանի մասին շատ բան կարելի է ասել ու գրել, սակայն պիտի ավարտեմ հոդվածս հարցնելով, թե ո՞ւմ է ձեռնտու վարժարանը փակելը, ընթերցողներին թողնելով մեկնաբանություններ անելու իրավունքը:

Melkonian parents left high and dry

First-year intake is cancelled because too few children register

By Jean Chalabi

WHAT WILL HAPPEN TO ME?

Մենք մեր ինքնությունը զորացրինք

Երեւանի «Անի» հյուրանոցում աշխույժ եռուզեռ էր: Հերթական անգամ Հայաստան էին ժամանել Լոս Անջելեսի ՀԲԸՄ Մարի Մանուկյան-Տեմիրճյան վարժարանի սաները: Հանդիպեցի խմբի ղեկավար, վարժարանի հայկական բաժանմունքի վարիչ Մինաս Գոճայանին, որը եղել է ԵՊՀ-ի շրջանավարտ եւ արդեն գիտությունների թեկնածու է: Խնդրեցի պատմել այցի ու վարժարանի մասին: «Մեր վարժարանը 80 լավագույն ուսուցիչներով հայեցի ոգի ու կրթություն է տալիս 1000 աշակերտի: Դպրոցում տրվում է երկլեզու՝ հայերեն եւ անգլերեն բարձրակարգ ուսուցում, հետեւանքներով ամերիկյան բարձրակարգ համալսարաններում սովորելը, որի արդյունքն է Բերկլիի, Հարվարդի եւ այլ բուհերում մեր սաների բազմաթանակությունը»: Դպրոցի սաների թիվը տարեցտարի աճում է, ինչը սիրել է եւս մեկ մասնաշենք կառուցել, ասում է պրն Գոճայանը: Հստակ միտում է նկատվում՝ անգլախոս երկրորդ սերունդը ցանկանում է իր գավակներին հայկական կրթության տալ ու որ կարեւորն է՝ հայրենասիրական ոգով դաստիարակել:

Ամերիկացի Ջերալդ Մկկեյի (աշակերտների գծով կառավարիչ) առաջարկով ու նախաձեռնությամբ 1999 թ.-ից դպրոցի ավարտական դասարանի աշակերտներին (16-17 տարեկան) մեկ շաբաթով Հայաստան են բերում: Պրն Մկկեյը մեր զրույցի ժամանակ նշեց, որ «հայ ժողովուրդը խելացի, ուշիմ եւ ստեղծարար է: Հայ աշակերտներն ուսման առանձնահատուկ սեր ունեն, ես դա նկատել ու բարձր եմ գնահատում այն 17 տարիների ընթացքում, որ պատասխանատու եմ դպրոցում: Պարզապես հաճույք եմ ստանում հայ աշակերտներից, որոնք էլ ինձ պահում են դպրոցում, մինչդեռ վաղուց կարող էի չաշխատել: Աշակերտների սերը, ձգտումն իր արմատներին ու հայրենիքին, սա էր հիմնական պատճառը, որ ես նախաձեռնեցի ու պնդեցի Հայաստանում շրջադարձի գաղափարը եւ շատ գոհ եմ, որ մեր սաները խանդավառված են վերադառնում»:

Դպրոցի սաների 30 տոկոսը Հայաստանից գնացած երեխաներ են, որոնք շատ հետաքրքրությամբ մերվում են տեղացի, նախկին պոլսահայ, լիբանանահայ, սիրիահայ իրենց հասակակիցների հետ: Հովիկ Վարդանյանը ծնվել է Աբովյանում եւ մանուկ հասակում ծնողների հետ տեղափոխվել ԱՄՆ: Նա արդեն երրորդ անգամ է այցելում Հայաստան եւ շատ փոփոխություններ է նկատել. «Կարծես թե մուրացկանները էլ ացել են ու էլ ճամփադ չեն կտրում ու մուրում: Այցելելով իմ հարազատներին նկատեցի, որ մշակութային ջուր, լույս, գազ կա: Իսկ այստեղ ու այնտեղ հասակակիցներիս մեջ տարբերությունն այն է, որ այստեղ շատ ազատ են, ֆուտբոլ են խաղում, թղթախաղ, զրուցում են, ուրախանում, երգում ու պարում, ինչպես քույր ու եղբայր: Հենց դա Ամերիկայում չկա, այդպիսի մտերմությունն այնտեղ այլ կերպ է ընդունվում: Այստեղ հանգիստ կարող ես քայլել փողոցներով, այնտեղ՝ շրջում ենք մեքենայով եւ կաշկանդված ենք փողոց դուրս գալիս, վտանգ կա...»:

Լիբանանահայ Լաուրա Աջապահյանը պատմում էր, որ իրականացել է իր երազանքը. «Շրջում եմ մայր հայրենիքում ու թվում է, թե միշտ այստեղ եմ եղել: Վերադարձիս ամենքին պատմելու եմ իմ չքնաղ երկրի մասին, որտեղ ամենուր հայերեն են խոսում, եւ ես էլ այս մեկ շաբաթվա ընթացքում ավելի վարժ ու ազատ եմ խոսում եւ հասկանում»: Արեգ Հոռոզյանն ավելի շատ հավանել էր երիտասարդության անմիջականությունը, միասնական լինելը եւ հայրենիքում բոլոր աղջիկներին որպես քրոջ է ընկալում, իսկ այնտեղ այլ է...

Արփի Հինդոյան-Ասլանյանը հայոց լեզվի ու կրոնի պատմություն է դասավանդում եւ շրջադարձի պատասխանատուներից է: «Առաջին անգամ լինելով մայր հայրենիքում, ժամ-ժամի վրա տպավորություններս փոխվում են դեպի դրականը: Այցելելով թանգարաններ, պատմական վայրեր, զգացինք մեր ժողովրդի ուժն ու քաջությունը, իսկ երբ այցելեցինք Եռաբլուր, մեր քաջարի զոհվածների շիրիմներին, աշակերտները բոլորը երդվեցին բարձր պահել հայի պատիվը, օտար հողում զորացնել հայապահպանման ու հայրենասիրության ոգին, հայի ինքնությունը: Մենք այստեղ մեզ զգում ենք ինչպես գավակը մոր գրկում: Ես չէի կարծում, որ պիտի հանդիպեմ մի երիտասարդ սերնդի, որն ավելի լավ է տիրապետում անգլերենին, քան ուրիշ տեղ...»:

Ալեք Բժիշկյանը հուզված էր Արարատն ամեն օր տեսնելուց ու ոգեշնչված. 100-ից ավելի լուսանկարներ էր արել տարբեր տեղերից, տարբեր ժամերի: «Այս վեհությունը տեսնելիս ամենասուր զգացումը ջղայնությունն էր, որովհետեւ Արարատը մերն է եւ միեւնույն ժամանակ «մերը չէ»: Երբ ոտք դրեցի այս հողի վրա, զգացի, որ ես էլ եմ տերն իմ հայրենիքի: Երեւանը շատերը չէին պատկերացնում այսքան գեղեցիկ ու զարգացած, լուսավորված փողոցներ, շեղ ու քանկ մեքենաներ, շենքեր...»:

Վարժարանի սաներն, այցելելով Հայաստանի տեսարժան վայրերը, մտածում էին, թե ինչպես երկարաձգեն այցը: Մենք մեր ինքնությունը զորացրինք, ասում էին ՀԲԸՄ Մանուկյան-Տեմիրճյան վարժարանի սաները, որոնց ընդունել է Ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ կաթողիկոսը, որի հայրապետական օրհնությունը երեխաները կտանեն իրենց հետ որպես ազգապահպան պատգամ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԱՐԵՅԱՆ

Մինչ ծավալվում են ֆուդ-իրանական բախումները, Իրանը կոշտացնում է ԱՄՆ-ի նկատմամբ իր դիրքորոշումը

Հունիսի 28-29-ին Սեամբուլում գումարված ՆԱՏՕ-ի գագաթաժողովն ավարտվեց, սակայն արձագանքները շարունակվում են, իսկ արդյունքները տեղիք են տալիս տարբեր մեկնաբանությունների: Անկախ դրանց բնույթից, կարելի է ասել, որ գագաթաժողովի գլխավոր արդյունքը ՆԱՏՕ-ի ներգրավվածության աղահովումն է իրական գործընթացներում՝ Հյուսիսատլանտյան այս կառույցը հետզհետե դարձնելով ամերիկյան կառույց:

Այլ կերպ, գագաթաժողովի ընթացքում ԱՄՆ-ին հաջողվել է ոչ միայն աղահովել ՆԱՏՕ-ի ներգրավվածությունն իրական գործընթացներում, որը ենթադրում է ներգրավվածություն տարածաշրջանում, այլեւ ստեղծել է կառույցն իր ծրագրերին ծառայեցնելու անհրաժեշտ նախադրյալներ: Թեեւ վերոհիշյալ ներգրավվածությունը պայմանավորվում է Իրաքի աղագա բանակի մարզմամբ, չպետք է սակայն մոռանալ Իրանում ծավալվող հակաամերիկյան դիմադրությունն իրաքցիների միջոցով ճնշելու ԱՄՆ-ի դիրքորոշումը:

Դա կհաջողվի՞ ամերիկացիներին, թե՞ ոչ, դժվար է ասել: Բայց որ գագաթաժողովի ավարտին ԱՄՆ-ը կաարված է համարել իր առջեւ դրված առաջադրանքը, իսկ դա նրան Սիրիայի եւ Իրանի նկատմամբ գործադրվող ճնշումներն ուժեղացնելու նոր հնարավորություն է տվել, ակնհայտ է:

Ավելի քան ակնհայտ են տարածաշրջանում միջէթնիկ եւ միջդավանանքային բախումները որպես ճնշման միջոց օգտագործելու ամերիկյան նկրտումները: Հատկանշական է, որ մարտի 2-ին, երբ Քերբելայում եւ Բաղդադում շիա առաքների դեմ կազմակերպված ահաբեկչական պայթյունների հետեւանքով զոհվեց 282 մարդ, նույն օրը Պակիստանում հարձակման ենթարկվեցին շիա մահմեդականները, տալով ավելի քան 40 զոհ: Ինչ վերաբերում է միջէթնիկ բախումներին, արդա դրանք էլ մարտի 12-ին հրահրվեցին Սիրիայում: Երկրի քրդաբնակ Ղամիշլի քաղաքում ծայր առած ֆուդ-արաբական բախումներին անկարգություններով արձագանքեցին Իրանի քրդերը: Այսպիսով, հրահրվեցին նաեւ ֆուդ-իրանական բախումները:

Սիրիական իշխանություններին հաջողվեց վերջ տալ ֆուդ-արաբական բախումներին: Թերեւ դրանով էլ վերջ գտան դրա իրանյան արձագանքները: Սակայն հունիսի 1-ին Քուրդ-իրանական բախումներն, ըստ ամենայնի, արձագանքն են այն ձախողումների ու բարդությունների, որոնց առջեւ կանգնելով Իրանում Մ. Նահանգները զրկվել է տարածաշրջանում նոր պատերազմ սանձազերծելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է ադմիրալ Ալի Շամխանիի հայտարարությանը, թեեւ դա նախօրյակին Վաշինգտոնում ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելն Իսրայելի արտգործնախարար Սիլվան Շալոմի հետ քննարկել էր Իրանի միջուկային ծրագրի հարցն, այնուամենայնիվ, դա էլ պետք է համարել Իրանի միջոցով տարածաշրջանային միայն աղահովել ՆԱՏՕ-ի ներգրավվածությունն իրական գործընթացներում, որը ենթադրում է ներգրավվածություն տարածաշրջանում, այլեւ ստեղծել է կառույցն իր ծրագրերին ծառայեցնելու անհրաժեշտ նախադրյալներ: Թեեւ վերոհիշյալ ներգրավվածությունը պայմանավորվում է Իրաքի աղագա բանակի մարզմամբ, չպետք է սակայն մոռանալ Իրանում ծավալվող հակաամերիկյան դիմադրությունն իրաքցիների միջոցով ճնշելու ԱՄՆ-ի դիրքորոշումը:

Դա կհաջողվի՞ ամերիկացիներին, թե՞ ոչ, դժվար է ասել: Բայց որ գագաթաժողովի ավարտին ԱՄՆ-ը կաարված է համարել իր առջեւ դրված առաջադրանքը, իսկ դա նրան Սիրիայի եւ Իրանի նկատմամբ գործադրվող ճնշումներն ուժեղացնելու նոր հնարավորություն է տվել, ակնհայտ է:

Ավելի քան ակնհայտ են տարածաշրջանում միջէթնիկ եւ միջդավանանքային բախումները որպես ճնշման միջոց օգտագործելու ամերիկյան նկրտումները: Հատկանշական է, որ մարտի 2-ին, երբ Քերբելայում եւ Բաղդադում շիա առաքների դեմ կազմակերպված ահաբեկչական պայթյունների հետեւանքով զոհվեց 282 մարդ, նույն օրը Պակիստանում հարձակման ենթարկվեցին շիա մահմեդականները, տալով ավելի քան 40 զոհ: Ինչ վերաբերում է միջէթնիկ բախումներին, արդա դրանք էլ մարտի 12-ին հրահրվեցին Սիրիայում: Երկրի քրդաբնակ Ղամիշլի քաղաքում ծայր առած ֆուդ-արաբական բախումներին անկարգություններով արձագանքեցին Իրանի քրդերը: Այսպիսով, հրահրվեցին նաեւ ֆուդ-իրանական բախումները:

Սիրիական իշխանություններին հաջողվեց վերջ տալ ֆուդ-արաբական բախումներին: Թերեւ դրանով էլ վերջ գտան դրա իրանյան արձագանքները: Սակայն հունիսի 1-ին Քրդսանի ժողովրդավարական կոնգրեսը չեղյալ հայտարարեց դեռեւս Օջալանի ձերբակալությունից հետո փոխադարձ պայմանավորվածության արդյունքում PKK-ի հայտարարած զինադադարը, որը վերջին 5 տարիներին ուժի մեջ էր մնում Թուրքիայում:

Մինչ թուրքական իշխանությունները պատասխանական Վաշինգտոնից պահանջում էին վերջ տալ PKK-ի գործունեությունը Հյուսիսային Իրաքում, իսկ Վաշինգտոնը վերջիններիս վնասազերծումը հանձնարարում էր Իրաքի ժամանակավոր կառավարությանը, հուլիսի 6-ին իրանական աղբյուրները տեղեկացրին, որ վերջին շրջանում հաճախակի են դարձել Իրանի անվտանգության ուժերի եւ PKK-ականների բախումները, որոնց հետեւանքով առ այսօր զոհվել են 9 իրանցի սահմանապահ եւ 20 ֆուդ գրոհային: Հուլիսի 7-ին Իրանի պատգամավորների նախարար, ադմիրալ Ալի Շամխանին հայտարարեց. «ԱՄՆ-ն ու Իրանի Իսլամական Հանրապետության մյուս թշնամիները թող իմանան, որ մեր երկրի դեմ որեւէ ռազմական գործողությանն ամբողջ ուժով հակահարված ենք տալու: Մեր հակազդեցությունը ժամանակի եւ տեղի առումով լինելու է անսահմանափակ»:

Քուրդ-իրանական բախումներն, ըստ ամենայնի, արձագանքն են այն ձախողումների ու բարդությունների, որոնց առջեւ կանգնելով Իրաքում Մ. Նահանգները զրկվել է տարածաշրջանում նոր պատերազմ սանձազերծելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է ադմիրալ Ալի Շամխանիի հայտարարությանը, թեեւ դա նախօրյակին Վաշինգտոնում ԱՄՆ պետքարտուղար Քոլին Փաուելն Իսրայելի արտգործնախարար Սիլվան Շալոմի հետ քննարկել էր Իրանի միջուկային ծրագրի հարցն, այնուամենայնիվ, դա էլ պետք է համարել Իրաքի միջոցով տարածաշրջանային գործընթացներում ՆԱՏՕ-ի ներգրավվածության արդյունք:

Որքան էլ ԱՄՆ-ն Աֆղանստանում վերահսկի մայրաքաղաք Քաբուլը միայն, իսկ Իրաքում՝ վարչապետ Ալլաուի գլխավորած ժամանակավոր կառավարությանը, այնուամենայնիվ, տարածաշրջանում նոր պատերազմ սանձազերծելու հնարավորությունից զրկվելն ամենեւին չի ենթադրում, որ նա հրաժարվում է Իրանին սպառնալու մտադրությունից: Քանի որ ՆԱՏՕ-ն ներգրավվել է տարածաշրջանային գործընթացներում, ուստի սպառնացողների դերում են հայտնվել նաեւ Հյուսիսատլանտյան այդ դաշինքի երկրները: Ակնհայտ է, որ ռազմական ներխուժման սպառնալիքները թափ կհաղորդեն ֆուդ-իրանական բախումներին: Իսկ դրանց ծավալումը փոխադարձաբար՝ սպառնալիքներին: Այսինքն՝ բախումներն ու սպառնալիքները փոխկապակցված են: Եթե այդպես է, արդա Իրանի պատգամավորների նախարարի հայտարարությունը որպես կանխարգելիչ միջոց պետք է ուղղված լինի ինչպես երկրում միջէթնիկ բախումներ հրահրելու, այնպես էլ երկիրը ռազմական ներխուժման մշտական սպառնալիքի տակ պահելու ամերիկյան նկրտումների դեմ:

ՀԱՅՈՐ ՉԱՔԱՐՅԱՆ

Քերին խաղարկում է իրական հաղթաթուղթը

Իրաքում զոհված զինվորների թիվն անցնում է 1000-ից, խաղաղ բնակիչներինը՝ 10000-ից



Դեմոկրատական կուսակցությունից ԱՄՆ նախագահության թեկնածու Ջոն Քերին ներկայիս նախագահ Ջորջ Բուշին մեղադրել է Իրաքին առնչվող հետախուզական տվյալների սխալ օգտագործման մեջ: Ընտրողների հետ կայացած վերջին հանդիպումների ժամանակ նա ասել է, թե Բուշը դիտավորյալ մոլորության մեջ է գցել ամերիկացիներին, աղաստեղեկատվություն տարածելով իրաքցիների զանգվածային բնաջնջման զենքի եւ «Ալ Ղաիդայի» հետ Սադդամ Հուսեյնի ենթադրյալ կապերի վերաբերյալ:

Իրաքի պատերազմը դարձել է դեմոկրատների ընտրարշավի գլխավոր թեմաներից մեկը: Ջոն Քերին օգտվում է շաբաթավերջին Սենատի հրապարակած այն զեկուցագրից, ըստ որի ամերիկյան հետախուզությունն ուռճացրել է իրաքցիների զենքին առնչվող տեղեկատվությունը: «Նյու Յորք թայմսին» տված հարցազրույցում Քերին անձամբ Բուշին մեղադրել է Իրաքի պատերազմի նախօրեին հետախուզական տվյալների սխալ օգտագործման մեջ:

BBC-ն մեջբերում է Հյուսիսային Կարոլինայի Ռալլի քաղաքում հանրահավաքի ժամանակ Քերիի արած այն հայտարարությունը, թե Բուշը դիտավորյալ մեկնաբանում է հնարավոր քաղաքական դաշնակիցներին եւ դրանով իսկ վտանգում ամերիկացիների կյանքը: Քերիի խոսքերով, ԱՄՆ-ի նկատմամբ միջազգային ընկերակցության վստահությունը կարելի է վերականգնել միայն իշխանափոխության միջոցով:

«Մեր զինվորները ոչ մի դեպքում չպետք է դառնան նավթից ԱՄՆ-ի կախվածության պատանդները», ընդգծել է Ջոն Քերին:

Ինչ վերաբերում է բուն Իրաքին, այնտեղ կիրակի օրը Ալ Անբար նահանգում սպանվել են ամերիկացի 4 դեսանտայիններ: Այս հերթական զոհերը հաշվի առնելով, Իրաքում կոալիցիոն ուժերի կորուստներն արդեն անցնում են 1000-ից: BBC-ի տվյալներով, Իրաքում կոալիցիոն ուժերի կորցրած զինվորների 75 տոկոսն սպանվել է մարտական գործողությունների ընթացքում, մնացյալը՝ դժբախտ պատահարներից:

Սպանվածների գերակշիռ մեծամասնությունն ամերիկացիներն են, կան նաեւ 60 բրիտանացիներ:

Բայց ամենամեծ կորուստներն արձանագրվել են, իհարկե, իրաքյան խաղաղ բնակչության մեջ: Զոհված իրաքցիների ստույգ թիվը հայտնի չէ, քանզի նման հաշվարկներ անող հատուկ կազմակերպություն չկա: Այդուհանդերձ, ինտերնետային հրատարակություններից մեկի տվյալներով, Իրաքի պատերազմի սկզբից մինչեւ օրս զոհված խաղաղ բնակիչների թիվը վաղուց անցել է 10—հազարից:

ՀՐՈՒՍՏԱՊ

Սաակաշվիլին չի բացառում ռուս-վրացական զինված հակամարտությունը

Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին հայտարարել է, թե «Հարավային Օսիայում փորձում են զինված հակամարտություն հրահրել Ռուսաստանի որոշակի կայսերական ուժեր»: Մոսկովյան «Վրեմյա Նովոստեյ» թերթին տված հարցազրույցում նա բառացիորեն ասել է. «Եթե հակամարտություն ծագի, դա կլինի ոչ թե Վրաստանի ներքին գործը, այլ վրաց-ռուսական զինված հակամարտություն»:

Սաակաշվիլու կարծիքով, հակամարտություն հրահրողներից մեկը Ռուսաստանի Պետդուման է, քանի որ շաբաթ օրն ընդունել է հայտարարություն, որտեղ պատգամավորները Թբիլիսիին ամբաստանում են «հակահրավական եւ սադրիչ գործողությունների» մեջ եւ հիշեցնում են, որ 1774 թ. Ռուսաստանի կազմի մեջ է մտել միացյալ Օսիան:

Վրաստանի ղեկավարը հակամարտության բորբոքման մեջ ամբաստանել է նաեւ Հյուսիսային Օսիայի պետական կառույցներին, ասելով, թե դրանք «անմիջականորեն մասնակցում են Հարավային Օսիայի իրադարձություններին»: Բացի դրանից, ըստ Սաակաշվիլու, Ռուսաստանի «որոշակի զինվորական շրջանակներում կան ուժեր, որոնք նախահարձակում են պատրաստում Վրաստանի դեմ»:

«Միայն կիրակի օրը Ռուսաստանից Ցխինվալ մուտք գործեց զենքով լի երկու բեռնատար: Քաղաք մտան ռուսաստանցի 187 ելուզակներ՝ այսպես կոչված կազակներ, 7-8 աբխազներ, մոսկովյան եւ սիբիրյան աջբեւեաններ, որոնց վճարել են եւ Հարավային Օսիա ուղարկել կռվելու», հայտարարել է Սաակաշվիլին:

Միաժամանակ ՌԻԱ գործակալությունը հաղորդում է, որ Ցխինվալում տեղի է ունեցել վրաց-օսական հակամարտության կարգավորման խառնակող Վերահսկիչ խառը հանձնաժողովի նիստը, որտեղ պատասխանական Թբիլիսին եւ Ցխինվալը պայմանավորվել են հակամարտության գոտում դադարեցնել բոլոր սադրիչ գործողությունները:

Մոսկվայում սպանվել է ռուսալեզու «Ֆորբսի» գլխավոր խմբագիրը

Մոսկվայում ուրբաթ երեկոյան սպանված ամերիկյան «Ֆորբս» հանդեսի ռուսերեն տարբերակի գլխավոր խմբագիր Պոլ (Պավել) Խլեբնիկովի հոգեհանգստյան պատարագը տեղի կունենա չորեքշաբթի, ժամը 14-ին, Քրիստոս Փրկչի տաճարում: Այդ մասին Ինտերֆաքս գործակալության թղթակցին հայտնել է Մոսկվայում ԱՄՆ դեսպանության մամլո քարտուղարը:

Նա նշել է, որ դեսպանությունը Պոլ Խլեբնիկովի սպանության հետաքննության գործում «շարունակում է համագործակցել ՌԴ իրավապահ մարմինների հետ»: ԱՄՆ քաղաքացի Խլեբնիկովի հոգեհանգստի արարողությունը տեղի է ունեցել կիրակի օրը, Մոսկվայի Սբ. Եկատերինա եկեղեցում: Թաղումը կայանալու է ԱՄՆ-ում:

Հուլիսի 9-ի երեկոյան՝ ժամը 21.50-ին Խլեբնիկովը դուրս էր եկել Դոկուկինի փողոցում գտնվող խմբագրատնից, քայլել դեպի մետրոյի մոտակա կայարանը: Նա ուներ մարդ էր, բայց երթեւեկում էր մասնավոր ավտոմեքենաներով կամ մետրոյով: Երբ անցել էր մոտ 100 մետր, նրան հասած «Վոլգա» ավտոմեքենայից 4 կրակոց արձակվեց: Հաղորդվում է, որ Պոլ Խլեբնիկովը մահացել է ինչ անց՝ ժամը 22.10-ին, Մոսկվայի 20-դ կլինիկական հիվանդանոցում: Հիվանդանոցի վերելակը նրան փոխադրելիս խափանվել է: «Ֆիգարո» թերթը տեղեկացնում է, որ Խլեբնիկովն զբաղվում էր առավելապես Ռուսաստանի տնտեսական կյանքի խնդիրներով:

Սիրիան եւ Իրաքը կամրացնեն սահմանը

Իրաքի իշխանությունները հայտարարել են, որ Սիրիայի ղեկավարության հետ համաձայնության են հասել միջպետական սահմանի ամրապնդման շուրջը: BBC-ն այս կապակցությամբ նշում է, որ տվյալ փաստը վկայում է Սիրիայի տարածից Իրաք ծայրահեղականների անցումը կասեցնելու երկու կողմերի մտադրության մասին:

Դամասկոսում Սիրիայի նախագահ Բաշար Ասադի հետ բանակցելուց հետո Իրաքի փոխվարչապետ Բահրամ Սալեհը հայտարարել է, թե Սիրիան խոստացել է հնարավոր ամեն ինչ անել գրոհայինների անցումներին վերջ դնելու համար: Սալեհի խոսքերով, թե իրաքյան եւ թե սիրիական կողմերից սահմանը կվերահսկվի անվտանգության հատուկ ուժերի մասնակցությամբ: Սահմանախախտների նկատմամբ կձեռնարկվեն համատեղ ռազմական գործողություններ: Տարիներ շարունակ մախանենգները եւ տեղաբնակներն ավազուտներով անցնող զուտ պայմանական սահմանագիծը հաստել են առանց որեւէ պատասխանական ձեւակերպման:

2004 թ. սկզբներին ԱՄՆ իշխանությունները Սիրիայի նկատմամբ պատժամիջոցներ ձեռնարկեցին, պնդելով, թե այդ երկիրը չի ուզում կանգնեցնել իր տարածքից Իրաք թափանցող գրոհայինների հոսքը: Սիրիայի նախագահ Բաշար Ասադը BBC-ի թղթակցի հետ զրուցելիս հույս է հայտնել, թե ձեռք բերված համաձայնությունը կմեղմացնի Սպիտակ տան դիրքորոշումը Սիրիայի հանդեպ:

Իսրայելը չի կասարի ՄԱԿ-ի դատարանի վճիռը

Իսրայելի վարչապետ Արիել Շարոնը հայտարարել է, թե իր երկիրը չի կասարելու ՄԱԿ-ի Միջազգային քրեական դատարանի վճիռը եւ չի քանդելու այսպես կոչված «տարանջատիչ պարիսպը»: Ինչպես տեղեկացրել էին՝ **«Ազգի»** վերջին համարում, Հաագայում գործող ՄԱԿ-ի դատարանը շաբաթ օրն անօրինական էր ճանաչել պաղեստինյան տարածքներից Իսրայելն անջատող պատի կառուցումը Հորդանան գետի արեւմտյան ափին: Դատարանն Իսրայելին հանձնարարել էր դադարեցնել պարսպի կառուցումը, քանդել արդեն կառուցված մասը եւ փոխհատուցում վճարել շինարարության պատճառով իրենց ունեցվածքը կորցրած պաղեստինցիներին:

«Իսրայելը լիովին մերժում է դատարանի միակողմանի որոշումը, որը զուտ քաղաքական է», ասել Շարոնը կառավարության երեկվա նիստում: Նրա խոսքերով, դատավճիռն «պատակ է միջազգային հակահաբեկչական պայքարին»: Այս կապակցությամբ նա հիշեցրել է կիրակի օրը Թել Ավիվի ավտոբուսային կանգառներից մեկում իրականացված ահաբեկչությունը (1 զոհ եւ 20 վիրավոր), պնդելով, թե դատավճիռը լոկ նպաստելու է ահաբեկչությունների թվի աճին:

«Հարեց» թերթին տված հարցազրույցում Շարոնն ասել է, որ «տարանջատիչ պարսպի» կառուցումը պաղեստինցիների ահաբեկչություններից պատսպանվելու լավագույն ձեւն է: Նա բոլոր ժողովուրդներին կոչ է արել անտեսել ՄԱԿ-ի դատարանի «բարոյազուրկ որոշումը»:

Պ. Ք.

Մշակույթ

Անցյալ շաբաթ «Իմ Ռուբէն Սեւակը», «Ձրոյցներ Կարոիս Սուրէնեանի հետ», «Տիեզերի խուզարկուն Սուրիոյ մէջ» եւ «Երկիրներ եւ մարդեր. վէմ բազմահարիւր հեռոսներով» գրքերով Թորոս Թորանյանը լրացրեց իր գրական-հրատարակչական գործունեության 190-րդ հատորը: Հայաստանի գրողների միության կազմակերպած գրքերի շնորհանդեսին մասնակցում էին, Թորանյանին շնորհավորում ու ստեղծագործական կյանքում իր թողած գրական ժառանգության մասին խոսում էին ընկերները, մտերիմները: Վերջին տասնամյակներում Հայաստանում սփյուռքի եւ սփյուռքում Հայաստանի «դեսպանի» մասին շնորհանդեսի մասնակիցները միայն եռախոսի խոսք էին ասում, միայն գնահատում Թորանյան գրողի, մտավորականի հայրենանվեր գործը:

1990-ականներին՝ մութի ու խավարի տարիներին Թորանյանի ներկայությունը Հայաստանում ընկերներն իբրեւ լույսի շող են գնահատում: «Նա գալիս էր Հայաստան՝ մեզ հետ աղբելու անկախ Հայաստանի դժվար կենսագությունը: Նրա մեջ կարծես ներքին այրման մի հավերժական շարժիչ է աշխատում, երբ հարցը վերաբերում է իր հայրենիքին, ժողովրդին, իր ազգային մշակույթին», ասաց գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը:

Ընկերների գնահատմամբ՝ Թորանյանը այնտեղ է, ուր հայ կա: «Իր ձայնը մեկ կլսես Ջինասանեն, մեկ՝ Բեյրութեն, մեկ՝ Սինգապուրեն ու Հայաստանեն: Տիեզերական հայ մըն է», ասաց լիբանանահայ բանաստեղծ Սարգիս Կիրակոսյանը: Դեռեւս 1960-ականներին, երբ Հայաստան-սփյուռք հարաբերությունները որոշակի գաղափարախոսական, քաղաքական դայմանականություններ ունեին, Թորոս Թորանյանը կարող հասցնել առաջին կամուրջներից էր: «Երիտասարդ մի ժուռնալիստ էր, որը «Գարուն» ամսագրում համարեցավ բացահայտում էր այն, ինչ անհայտ էր մեր սերնդին, ասաց կինոգետ Դավիթ Մուրադյանը: Մեր սերունդը Թորոս Թորանյանի բանալիով է բացել սփյուռքի դռները իր մտքում: Դա հայկական լրագրության համար թարմ ոճի մի հրաշալի ոսկեղենիկ բանալի էր»: Լեւոն Անանյանը նիշ, ասաց Դավիթ Մուրադյանը: Այդ գաղափարը կերտող, արարեցնող, միմյանց փոխանցող մարդիկ, անհատականություններ են դեմ, էներգիայի աղբյուրներ են դեմ: Հենց Թորանյանի նմաններն են, որ ստեղծում են այն, ինչ կոչվում է հայոց սփյուռքի հոգեւոր եւ մտավոր տարածություն: Երբ այդ նեռուժը բացակայի, մնացած հարստությունները կդառնան անիմաստ, դրանց համար այլեւս չի լինի հասցե: Այդ հարստությունների իմաստը մեր հայ իրականության մեջ

Եւ մոլորակի ամեն անկյունում է, ուր հայ կա

Թորոս Թորանյան՝ գրող, հրապարակախոս, ազգանվեր հայ մարդ

գական ժառանգության մասին խոսում էին ընկերները, մտերիմները: Վերջին տասնամյակներում Հայաստանում սփյուռքի եւ սփյուռքում Հայաստանի «դեսպանի» մասին շնորհանդեսի մասնակիցները միայն եռախոսի խոսք էին ասում, միայն գնահատում Թորանյան գրողի, մտավորականի հայրենանվեր գործը:

1990-ականներին՝ մութի ու խավարի տարիներին Թորանյանի ներկայությունը Հայաստանում ընկերներն իբրեւ լույսի շող են գնահատում: «Նա գալիս էր Հայաստան՝ մեզ հետ աղբելու անկախ Հայաստանի դժվար կենսագությունը: Նրա մեջ կարծես ներքին այրման մի հավերժական շարժիչ է աշխատում, երբ հարցը վերաբերում է իր հայրենիքին, ժողովրդին, իր ազգային մշակույթին», ասաց գրողների միության նախագահ Լեւոն Անանյանը:



Ընկերների գնահատմամբ՝ Թորանյանը այնտեղ է, ուր հայ կա: «Իր ձայնը մեկ կլսես Ջինասանեն, մեկ՝ Բեյրութեն, մեկ՝ Սինգապուրեն ու Հայաստանեն: Տիեզերական հայ մըն է», ասաց լիբանանահայ բանաստեղծ Սարգիս Կիրակոսյանը: Դեռեւս 1960-ականներին, երբ Հայաստան-սփյուռք հարաբերությունները որոշակի գաղափարախոսական, քաղաքական դայմանականություններ ունեին, Թորոս Թորանյանը կարող հասցնել առաջին կամուրջներից էր: «Երիտասարդ մի ժուռնալիստ էր, որը «Գարուն» ամսագրում համարեցավ բացահայտում էր այն, ինչ անհայտ էր մեր սերնդին, ասաց կինոգետ Դավիթ Մուրադյանը: Մեր սերունդը Թորոս Թորանյանի բանալիով է բացել սփյուռքի դռները իր մտքում: Դա հայկական լրագրության համար թարմ ոճի մի հրաշալի ոսկեղենիկ բանալի էր»: Լեւոն Անանյանը մեծարեց գնահատեց Թորանյանի դերը 1990-ականներին «Գարունի» գոյատեւման գործում, երբ սփյուռքում վերջինս ամսագիրը տնտեսում խարդում եւ բաժանում էր:

Թորանյանին ճանաչողները, նրա գործին տեղյակ մարդիկ հավաստում են, որ եթե մեկ-երկու տասնյակ Թորանյաններ ունենանք, կարող ենք ասել, որ սփյուռքը փրկված է: «Սփյուռքը նախ եւ առաջ գաղափար է, այն չունի հող, չունի այն ֆիզիկական կենսատարածքը, որ կոչվում է հայրենիք, ասաց Դավիթ Մուրադյանը: Այդ գաղափարը կերտող, արարեցնող, միմյանց փոխանցող մարդիկ, անհատականություններ են դեմ: Էներգիայի աղբյուրներ են դեմ: Հենց Թորանյանի նմաններն են, որ ստեղծում են այն, ինչ կոչվում է հայոց սփյուռքի հոգեւոր եւ մտավոր տարածություն: Երբ այդ նեռուժը բացակայի, մնացած հարստությունները կդառնան անիմաստ, դրանց համար այլեւս չի լինի հասցե: Այդ հարստությունների իմաստը մեր հայ իրականության մեջ որոշվում է սփյուռքի մտավոր համակարգով, իսկ այս մտավոր համակարգի ճարտարապետներից, սեւագործ բանվորներից, ոմնաղիրներից, գեղանկարիչներից մեկն է Թորոս Թորանյանը»: Կինոգետը ցանկություն հայտնեց ի դեմս Թորանյանի խոնարհվել հայ այն բոլոր մտավորականների առջեւ, որոնք մինչեւ այսօր հայոց գրիչը պահում են սփյուռքի սրտիակ էջերի վրա:

Բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս Թորոս Թորանյանը սփյուռքի ամենաստեղծ պարբերականներում ներկայացրել է 1960-90-ականների սփյուռքի եւ Հայաստանի գրական-մշակութային մեր բոլոր նշանավոր, երեւելի անհատականությունների: Վերջին չորս հրատարակությունները նույնպես այդ նպատակին են ծառայում: «Տիեզերի խուզարկուն Սուրիոյ մէջ» գրքում ներկայացված են նշանավոր ասորագետ Գրիգոր Գուրզադյանի՝ Սիրիայում ունեցած հանդիպումները, իսկ «Երկիրներ եւ մարդեր»-ը խանիինգ երկրների հայ նշանավոր գրողների, արվեստագետների, մտավորականների դիմանկարների ժողովածու է: Թորոս Թորանյանն այն համարում է մեր ժողովրդի դեռեւս շարունակելի վերը:

ԹԱՄԱՐ ՄԵԼԱՍՅԱՆ

«Գեղարքունիք-2004» փառատոնը բացվեց

Հուլիսի 10-ին Գեղարքունիքի մարզում տոնական տրամադրությունը համակել էր բոլորին: Միաժամանակ մարզի հինգ քաղաքներում ներկայացրեցին. Գավառում, Գ. Սունդուկյանի անվան թատրոնը Կ. Խոդիկյանի «Կինը անձրեւից հետո», Սեւանում՝ Հ. Պարոնյանի անվան կոմեդիայի թատրոնը Վ. Կոտոյանի «Իմ զոհանչը», Մարտունիում՝ Պատանի հանդիսատեսի թատրոնը Մ. Սեյմախի «Ձգուշացիր առյուծից», Վարդենիսում՝ Արտաշատի Ա. Խաչատրյանի անվան թատրոնը Գ. Գետրգյանի «Իրարանցում Բագրատի տանը» եւ Ճամբարակում՝ Կ. Սանինսլավսկու անվան ռուսական թատրոնը Ժ. Բրեկեի, Մ. Լասգեի «Ախ, ֆրանսիական այս խաղերը» բեմադրությունները: Թատերական փառատոնի հանդիսավոր բացումը կայացավ Գավառի Լեւոն Քալանթարի անունը կրող 120-ամյա թատրոնի հարկի տակ, որտեղ, չնայած հոդառաս անձրեւին ու կարկուտին, ասեղ գցելու տեղ չկար, եւ թատերասեր գավառցիները ողբոշխնեցին 14 տարվա բացակայությունից հետո իրենց հյուր եկած թատերախմբի խաղը:

Ողջույնի խոսքեր ասացին մարզպետ Ստեփան Բարսեղյանը, մշակույթի փոխնախարար Կարինե Խոդիկյանը, ՀԹԳՄ նախագահ Երվանդ Ղազանչյանը, Գ. Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար, ՀՀ ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանը եւ Նյու Յորքից ժամանած դրամատուգ ու բեմադրիչ Հրանտ Մարգարյանը: Մարզպետը հավաստիացրեց, որ մարզի բնակչությունը ոգեւորված է փառատոնով եւ պատրաստվում է այն դարձնել ավանդական: Պրն Մարգարյանն էլ ողջունելով փառատոնը, գոհունակություն հայտնեց, որ «առաջին անգամ մարզում լինելն ու փառատոնին մասնակցելը պարտավորեցնող է»: Նա նաեւ մեջ բերեց Խրիմյան Հայրիկի խոսքը, որ թատրոնը երկրորդ եկեղեցին է, որը հոգեպարար արվեստի պահեր է պարգեւում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Լոյս տեսաւ Անդրանիկ Փոլատեանի երկսիրուքիւնը նուիրուած Շահան Շահնուրին

Թէքէեան մշակութային միութեան Նիւ Եորքի մասնաճիւղի հրատարակութեամբ օրերս լոյս տեսաւ ամերիկահայ ծանօթ հասարակական գործիչ ու գրագէտ Անդրանիկ Լ. Փոլատեանի գիրքը նուիրուած Շահան Շահնուրի ծննդեան 100-ամեակին (1903-2003): Մեծանուն գրագէտին մինչեւ 1950 թուականի գրական գործունէութեան նուիրուած այս ռուսմնասիրութիւնը՝ յունիս 1, 1950, Կիպրոս, անտիպ մնացած էր հեղինակին մօտ: Փոլատեանի նիւքրզիաբնակ սրտակից ընկերներուն խաչալերանքովը լոյս աշխարհ կու գայ 135 էջերէ բաղկացած այս հատորը, ունենալով կարգ մը յաւելումներ 1950-էն անդին Շահնուրի հին էջերէն, նամականիէն եւ յարակից այլ նիւթերէն:

Յառաջաբանին մէջ հեղինակը ոգեկոչելով Շահնուրի յիշատակը կարձանագրէ այս գործին եւ կը ներկայացնէ առհասարակ Շահնուրի հետ անցեալէն եկող կարգ մը յիշատակներ եւ անձնական փորձառութիւններ:

Հակառակ խանի մը առիթներու ներկայացման հեղինակը բախտը չունեցաւ անձամբ ճանչնալու Շահնուրը, սակայն ՀԲԸՄ-ի իր երկարամեայ պատասխանատուութեան օրերուն մնայուն կապի մէջ մտած ըլլալով անոր հետ միութեան ընծեռած բարիքներէն բաժին մը կ'ապահովէ Սէն Ռաֆայէլի բուժարանի այդ մնայուն բնակիչին:

Կան սփիւռքահայ թէ հայրենի մամուլի էջերու մէջ լոյս տեսած Շահնուրին նուիրուած մենագրութիւններ թէ յօդուածներ, ինչպէս նաեւ կարգ մը յատկանշական լուսանկարներ ու ձեռագիրներ, որոնք համադրուած կերպով կ'ամբողջացնեն այս հատորը:

Հատորին ներածականին մէջ հեղինակը կը խոստովանի. «Նահանջը առանց երգի» գիրքը, անունիս պէս, դարձաւ իմ անբաժան ընկերս, իմ բարձր ընկերս, իմ եսիս մէկ մասը, եւ անոր հեղինակը՝ հերոսս... կարդացի անկէ ինչ որ գտայ, փնտռեցի անոր սրտագրութիւնը թերթերու մէջ, բայց... չկար, հիանդ պառկած էր հեռատր բուժարանի մը մէջ: Ու յանախ, գիշերները, առանձին եղած պահերուս, մտածեցի միայն անոր մասին... եւ այս էջերը կը կազմեն իմ ապրումներուս գրատր արտայայտութիւնը»:

ՌԱՖ մամլոյ կենդրոնական դիւան

Ստանալու համար Անդրանիկ Փոլատեանի այս գործը դիմել՝

Tekeyan Cultural Assoc.
P. o. Box 1074
Englewood Cliffs, N. J. 07632
U.S.A

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

Կարլովի Վարիում հաղթեց իտալական կինոն

Սկիզբը էջ 1

Իսկ Կարլովի Վարիում հուլիսի 2-10-ը ցուցադրվող մոտ 300 ֆիլմերից 16-ը հավակնում էին ստանալ Գրան պրին՝ «Կրիստալ Գլոբը», 20 հազար դոլար դրամական պարգեւով: 7 հոգուց բաղկացած միջազգային ժյուրին ամերիկացի կինոռեժիսոր Ալ Ռուբանի գլխավորությամբ երկարատեւ ու թեժ քննարկումներից հետո ի վերջո նախապատվությունը տվեց իտալացի կինոբեմադրիչ Անդրեա Ֆրազիի «Երեխաների պատմություն» ֆիլմին, որը, մեր կարծիքով, ամենեփին էլ կինոփառատոնում ցուցադրված լավագույն ֆիլմը չէր: Իտալացի Մարկո Բելոչիոյի «Բարի լույս, գիշեր» ֆիլմը, որ ցուցադրվեց ոչ մրցութային «Հորիզոններ ծրագրում», թերեւս ավելի էր արժանի որեւէ մրցանակի: Ինչեւէ, ժյուրիի փոխզիջումային մի այլ որոշում էր հատուկ մրցանակի շնորհումը խորվաթական «Տու» («Այստեղ») (2003) ֆիլմին, որի բեմադրիչ Զրինկո Օգրեսան լավագույնս տվել էր այսօրվա խորվաթական հատարակության իրական պատկերը՝ անցած պատերազմի թողած ֆոնի վրա: Լավագույն կինոբեմադրիչի մրցանակը շնորհվեց իսպանացի խավիեր Բերմուդեզին «Լեոն եւ Օլվիդոն» ֆիլմի համար: Ի դեմ, այս ֆիլմի գլխավոր դերակատարուհի Մարսա Լարալդեն ստացավ նաեւ «Լավագույն կին դերասանուհու» մրցանակը: Բայց այս մրցանակը նրա հետ կիսեց դանիական «Ծննդից հետո» ֆիլմի դերասանուհի Կարեն-Լիզ Մինսթերին: Լավագույն տղամարդու դերակատարման համար մրցանակը շնորհվեց Մաֆս Ռիմելթին գերմանական «Նաոլա» ֆիլմի համար:

Ռուս կինովավերագրող Պավել Մեդվեդեւի «Լռության հարսանիք» ֆիլմը ստացավ վավերագրական ֆիլմերի լավագույն մրցանակը, իսկ մրցութային ծրագրում ներկայացված Վալերի Տոդոռովսկու «Իմ խորթ եղբայր Ֆրանկշտեյնը» ֆիլմն արժանացավ ընդամենը կինոքննադատների միջազգային կազմակերպության մրցանակին, թեեւ ֆիլմի երեք գլխավոր դերակատարներն էլ՝ Յառմոլնիկը, Յակովլեւան եւ հատկապես Դանիել Սոֆիվակովսկին արժանի էին մրցանակների: Ռուսական մի այլ ֆիլմ, որ ցուցադրվեց «Արեւելք Արեւմուտից» ծրագրում, Սվետլան Ստասենկոյի «Անգել նա Աբոչինե» խաղարկային ֆիլմն էր, որ ցույց էր տալիս 80-90 ական թվականների անցումային շրջանի երիտասարդության պայքարը: Իսկ Վլադիմիր Մաշկովի «Պարպա» ֆիլմը, որը հատուկ ծրագրի մաս էր կազմում, նույնպես մեծ ընդունելություն գտավ, սակայն որեւէ մրցանակ չէր կարող ստանալ, քանի որ ինքը՝ Մաշկովը գլխավոր ժյուրիի կազմում էր:

Կինոփառատոնում լավ էին ներկայացված նաեւ արեւելյան ֆիլմերը՝ հատկապես կորեական, ճապոնական, հնդկական, իրանական ու թուրքական: Ի դեմ, փառատոնի շրջանակներում ներկայացվեցին 10 լավագույն թուրքական ֆիլմերը:

Մեծ թվով թուրք բեմադրիչներ ու դերասաններ էին ժամանել Կարլովի Վարի: Մեզ հաջողվեց դիտել 1970 թվականին նկարահանված «Ռամոտ» («Հույս») ֆիլմը, որ ժամանակին արգելված է եղել Թուրքիայում, իսկ բեմադրիչ Յըլմազ Գյունեյը՝ որոշ ժամանակ ձերբակալված: Հետագայում նա տեղափոխվել է Ֆրանսիա, դարձել Կաննի մրցանակակիր եւ 1984 թվականին էլ մահացել Փարիզում: Գյունեյի ֆիլմը մեզ հիշեցրեց հայկական «Տժվժիկ» ֆիլմը՝ աղքատ գյուղացիական ընտանիքի պատմություն:

Փառատոնի շրջանակներում ցուցադրվեցին նաեւ այլ ծրագրային ֆիլմեր՝ ամերիկյան բեմադրիչ Ջոն Կասավետեսի ֆիլմերը, չեխ կինոռեժիսոր Միրոսլավ Օնդրիչեկի ֆիլմերը եւ այլ հատուկ ծրագրեր: Մեզ համար հաճելի էր, որ կինոփառատոնի պատասխանական ծրագրում հատուկ տեղ էր տրված Սերգեյ Փարաջանովին, որի 80-ամյակը հիշատակվեց «Հուսկովա» կինոթատրոնում «Նռան գույն»-ի ցուցադրությամբ: Դահլիճում ոչ մի ազատ տեղ չկար: Դա մեր հայրենակցի հիշատակին տրված ամենամեծ գնահատականն էր:

Ի դեմ, այս տարի մրցութային ծրագրերում որեւէ այլ հայկական ֆիլմ չկար: Հիշեցնենք, որ 2003-ին Հարություն Խաչատրյանի «Վավերագրողն» այս փառատոնում ստացավ ժյուրիի հատուկ մրցանակը: Եվ այս տարվա կինոփառատոնի գովազդային տեսահոլովակներում էլ հայ կինոբեմադրիչի պարգեւատրումն անընդհատ երեւում էր չեխական հեռուստատեսության էկրանին:

Սաթենիկ Հովհաննիսյանի աշխատանքները նկարիչների միությունում

Հուլիսի 12-ին նկարիչների միությունում տեղի ունեցավ Սաթենիկ Հովհաննիսյանի անհատական նկարների երրորդ ցուցահանդեսը: Առաջինը տեղի է ունեցել 1991 թվականին, երկրորդը՝ 1996 թվականին:

Սաթենիկ Հովհաննիսյանը ծնվել է Երեւանում: Ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը: Մասնակցել է հանրապետական, միջազգային ցուցահանդեսների: Կանադայում հանդես է եկել 10 գեղանկարչական աշխատանքներով, Մոսկվայում՝ դիմանկարներով:

Ինչպես նշեց նկարիչների միության նախագահ Կարեն Աղամյանը, Ս. Հովհաննիսյանի նկարները լրացուցիչ ջերմություն են հաղորդում, նրա մոտ աննշան երեւույթը կարող է շունչ առնել, տրամադրություն ստեղծել. «Նայելով նրա ստեղծագործություններին, տեսնում ենք, թե ինչպիսի սեր ունի դեպի շրջապատը, մարդը, բնությունը, եւ ինչպես է դրանք յուրովի մեկնաբանում»:

Ցուցահանդեսին ներկայացված էին շուրջ 60 նկարներ. «Սպիտակ քարեր», «Մանուշակագույն աշուն», «Հորովել», «Միայնակը», «Բակ Կոնդում» եւ այլն, որոնք նկարչի վերջին 7 տարվա աշխատանքներն են:

ՄԱՆԱ ԳԱՅԻՔՅԱՆ
ՆԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՄԱՏՐԱՆԿԱՐԻՉԻ ԱՉՔԵՐՈՎ

«Փյունիկն» ու «Միկան» մեկնարկի են դուրս գալիս

Այսօր կսրվի ֆուտբոլի եվրոպական գավաթների 2004/05 թթ. խաղարկության մեկնարկը: Հայաստանը ներկայացնող չորս թիմերից առաջինը մեկնարկի դուրս կգան ՀՀ չեմպիոն «Փյունիկն» ու «Միկան»: «Փյունիկն» այսօր Սկոպիեում չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլում ուժերը կչափի Մակեդոնիայի «Պոբեդայի» հետ: Ի դեմ, Հայաստանի հանրային հեռուստատեսությունը նախատեսում է Երեւանի ժամանակով ժամը 23-ից խաղի ուղիղ հեռարձակում կազմակերպել: Իսկ «Միկան» ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարի առաջին խաղում «Հանրապետական» մարզադաշտում այսօր կիյուրընկալի հունգարական «Հոնվեդին»: Խաղը կսկսվի ժամը 20-ին:

«Փյունիկը» մրցավայր է մեկնել երեկ առավոտյան: Թիմի կազմը համալրել է ՀՀ հավաքականի պաշտպան Սարգիս Հովսեփյանը: «Փյունիկի» մրցակիցը՝ «Պոբեդան» նախապատրաստական փուլում ընկերական մի քանի հանդիպում է անցկացրել: Հետաքրքրական է, որ առաջնության ավարտից հետո «Պոբեդայի» մարզիչն էլ փոխվել է, թիմին հրաժեշտ են տվել մի քանի ֆուտբոլիստներ: «Պոբեդան» երկրի առաջնությունում 5 միավորով գերազանցել էր 2-րդ մրցանակակիր «Սիլեֆսին»: Անցկացրած 33 հանդիպումներում Մակեդոնիայի չեմպիոնը տոնել է 22 հաղթանակ, 5 խաղ ավարտել ոչ-ոքի, 6-ում պարտվել: Գնդակների տարբերությունն է՝ 78-42: Խփած գնդակներից 25-ը բաժին է ընկնում «Պոբեդայի» հարձակվող, առաջնության լավագույն ռմբարկու Դիմիտրովսկուն:

«Փյունիկը» 5-րդ անգամ է մասնակցելու եվրոգավաթների մրցաշարերին: Թիմի նորամուտը կայացել է 1996 թ. հուլիսի 17-ին ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում: Ֆինլանդիայի չեմպիոն ՀԻԿ-ին «Փյունիկը» Երեւանում հաղթեց 3-1 հաշվով: Երկու գոլ խփեց Արսեն Ավետիսյանը, մեկը՝ Համլետ Մխիթարյանը: Ցավոք, պատասխան խաղում «Փյունիկը» նույն հաշվով զիջեց մրցակցին, իսկ լրացուցիչ ժամանակում պարտվելով 1-2 հաշվով, դուրս մնաց հետագա պայքարից: Անհաջող էր թիմի նորամուտը նաեւ չեմպիոնների լիգայի մրցաշրջանում: 1997 թ. «Փյունիկը» չեմպիոնների լիգայի որակավորման առաջին փուլում երկու հանդիպումներում էլ զիջեց հունգարական ՄՏԿ-ին (0-2, 3-4): Իսկ ահա 2002 թ. մեր չեմպիոնին առաջին անգամ հաջողվեց հաղթահարել առաջին փուլի արգելքը: «Փյունիկը» հյուրընկալվելիս պարզապես

ջախջախեց ֆիննական «Տամպերեին» (4-0), Երեւանում էլ հաղթեց 2-0 հաշվով: Սակայն 2-րդ փուլում մեր չեմպիոնին չհաջողվեց հաղթահարել Կիեւի «Դինամոյի» դիմադրությունը (0-4, 2-2): Անցյալ տարի պատմությունը կրկնվեց: Առաջին փուլում հաղթելով իսլանդական «Ռեյկյավիկին» (1-0, 1-1), «Փյունիկը» հաջորդ փուլում երկու խաղերում էլ զիջեց Սոֆիայի ԲԿՄԱ-ին (0-2, 0-1): Այսպիսով, եվրոգավաթների մրցաշարերում փյունիկցիներն անցկացրած 12 հանդիպումներից 4-ում հաղթել են, 2-ն ավարտել ոչ-ոքի, 6-ում պարտվել են: Խփած եւ բաց թողած գնդակների տարբերությունն է՝ 18-22: «Փյունիկ»-«Պոբեդա» պատասխան հանդիպումը կկայանա հուլիսի 21-ին, ժամը 21-ին «Հանրապետական» մարզադաշտում: Այդ հանդիպումը սպասարկելու է ՀՖԵՅՖԱ-ի մրցավար Վիլիաբեր Գիդոն:

«Միկան» 3-րդ անգամ է հանդես գալու եվրոգավաթներում: ՈՒԵՖԱ-ի գավաթի նախորդ երկու խաղարկություններում թիմը զիջել է ռումինական «Ռաֆիդին» (0-3, 1-0) եւ «Բրաշովին» (1-5, 0-2): «Միկայի» այսօրվա մրցակից հունգարական «Հոնվեդը» երկրի առաջին խմբի առաջնության հաղթողն է եւ նոր մրցաշրջանում հանդես է գալու բարձրագույն խմբում: «Հոնվեդի» հետ հանդիպումներում «Միկան» առավելություն է սեփական ուժերին: Թիմն այլ ակումբներից համալրում չի ստացել: Նշենք, որ այսօրվա խաղը վարելու է Հյուսիսային Իռլանդիայի մրցավարական բրիգադը Ռուս Մայլ Թոմասի գլխավորությամբ:

Հուլիսի 15-ին մրցավեճի կբռնվեն մեր երկրի մյուս երկու պատվիրակները: «Բանանցը» Մարիուպոլում կմրցի ուկրաինական «Իլիչեւեցի» հետ, իսկ «Շիրակը» Երեւանում կհյուրընկալի մոլդովական «Տիրասպոլին»: Ժամը 19-ին հունգարացի մրցավար Աթիլա Դուբրավիցկին կազդարարի շիրակցիների հանդիպման սկիզբը: Նշենք, որ «Բանանցը» համալրել են Սերգեյ եւ Նշան Էրզրումյան եղբայրները «Կիլիկիայից» եւ Արթուր Մինասյանը՝ «Արարատից»: «Շիրակի» պատասխանատու գիծը կամարտնդի «Դինամո-Զենիթից» հրավիրված փորձառու Տիգրան Գասպեյանը:

Եվ այսպես, այսօր «Հանրապետական» մարզադաշտում ժամը 20-ին կսկսվի ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկության «Միկա»-«Հոնվեդ» հանդիպումը, իսկ ուշ երեկոյան Սկոպիեում մրցասպարեզ դուրս կգա երկրի չեմպիոն «Փյունիկը»: Մնում է հաջողություն մաղթել Հայաստանի պատվիրակներին այդ պատասխանատու խաղերում:

Արդյունավետ գրոհներ

Առաջնության երկրորդ շրջանի վերջին տուրի երկու հանդիպումներն էլ աչքի ընկան բարձր արդյունավետությամբ: «Բանանցը» 3-2 հաշվով հաղթեց «Արարատին»: Այդ խաղում արարատցիների պաշտպանները դարպասապահ Ռադաջայի գլխավորությամբ անվստահ խաղացին: Հենց նրանց անհամաձայնեցված գործողությունների հետեւանքով արդեն 10-րդ րոպեին Կոնդրաշենկոն գլխի հարվածով բացեց հաշիվը: Ճիշտ է, շուտով Նավոյանը վերականգնեց հավասարակշռությունը, սակայն ընդմիջումից հետ անց նախ Աշոտ Գրիգորյանը, ապա եւ Տիգրան Եսայանն առաջ մղեցին «Բանանցին»: Մեր Ավանեսյանի խփած գոլից հետո հաշիվը կրճատվեց, սակայն «Արարատին» չհաջողվեց խուսափել պարտությունից:

Գոլառատ էր նաեւ առաջնության հետնապահներ «Կոտայքի» եւ «Շիրակի» մրցախաղը: Հաղթանակը կարետոր նշանակություն ուներ անհաջող հանդես եկող երկու թիմերի համար էլ: Սակայն գրանցվեց ոչ-ոքի (3-3): «Կոտայքից» աչքի ընկան Դահրամանովը, Միրզախանյանն ու Վարդազարյանը, «Շիրակից» երկու գոլ խփեց Երվանդ Հակոբյանը, մեկ գնդակ էր մրցակցի դարպասն անցկացրեց Գառնիկ Սարգսյանը: «Միկա»-«Դինամո-Զենիթ» հանդիպումը հետաձգվել է եւ կկայանա հուլիսի 18-ին: Այդ հանդիպումով կավարտվի առաջնության 2-րդ շրջանը:

Մրցաշարային աղյուսակ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Փյունիկ	13	10	3	0	42-13	33
2. Միկա	13	9	2	2	21-13	29
3. Արարատ	14	6	4	4	24-20	22
4. Բանանց	13	6	2	5	16-18	20
5. Դ.-Զենիթ	13	5	5	3	14-15	20
6. Կիլիկիա	14	3	2	9	17-26	11
7. Շիրակ	14	1	5	8	14-25	8
8. Կոտայք	14	1	3	10	15-33	6

Ռմբարկուները

Նշան Էրզրումյան	«Բանանց»	10
Էդգար Մանուչարյան	«Փյունիկ»	10
Գալուստ Պետրոսյան	«Փյունիկ»	9
Արմեն Շահգելդյան	«Միկա»	8
Մեր Ավանեսյան	«Արարատ»	8
Լեւոն Փաչաջյան	«Փյունիկ»	8
Երվանդ Հակոբյան	«Շիրակ»	6

Բրազիլիան ու Կոլումբիան մտան հաջորդ փուլ

Ամերիկայի գավաթի խաղարկությունում Բրազիլիայի հավաքականն իր 2-րդ հաղթանակը տոնեց՝ 4-1 հաշվով պարտության մատնելով Կոստա Ռիկայի ընտրանուն: Բրազիլացիներից «հեթ-տրիկի» հեղինակ դարձավ Ադրիանոն: «C» խմբի մյուս խաղում Պարագվայի եւ Չիլիի հավաքականների հանդիպումն ավարտվեց ոչ-ոքի (1-1): Այսպիսով, անկախ վերջին տուրի խաղից, Բրազիլիայի ընտրանին նվաճեց հառորդ եզրափակիչի ուղեգիր:

Իսկ ահա, «B» խմբում հանդես եկող արգենտինացիները 0-1 հաշվով զիջեցին մեքսիկացիներին, եւ դժվարացրին հաջորդ փուլ դուրս գալու խնդիրը: Այս խմբում 4-ական միավորով առաջատարներն են Ուրուգվայի եւ Մեքսիկայի հավաքականները: Ուրուգվայի ընտրանին 2-1 հաշվով հաղթեց էկվադորցիներին: «A» խմբում իր 2-րդ հաղթանակը տոնեց Կոլումբիայի հավաքականը, որը 1-0 հաշվով պարտության մատնեց բոլիվիացիներին: Պերուի ընտրանին էլ 3-1 հաշվով հաղթեց Վենեսուելային:

Մանչինին նախընտրեց «Ինտերը»

Առաջիկա 3 մրցաշրջաններում Միլանի «Ինտերին» կմարզի Ռոբերտո Մանչինին: 39-ամյա մարզիչը մինչեւ 2007 թ. հունիսի 30-ը պայմանագիր է կնքել «Ինտերի» հետ: Դեռեւս մեկ ամիս առաջ արդեն հայտնի էր, որ Մանչինին փոխարինելու է Ալբերտո Զակերոնիին, որն ընդամենը 8 ամիս գլխավորեց թիմը: Այն ժամանակ «Ինտերի» նախագահ Զակինտո Ֆակետին հայտնել էր, որ շուտով Մանչինիի հետ պայմանագիր կկնքի: Սակայն գործարքը մի փոքր ձգձգվեց, քանի որ Մանչինին մինչեւ 2008 թ. պայմանագիր ուներ կնքած «Լացիոյի» հետ, որը չէր ցանկանում առանց փոխհատուցման բաժանվել նրանից՝ պահանջելով 5 մլն եվրո: «Ինտերը» պատրաստ էր այդ գումարի մի մասը կանխիկ վճարել, իսկ մյուսի դիմաց վարձավճարով «Լացիոյին» տրամադրել մի քանի ֆուտբոլիստ: Ստեղծված իրավիճակից օգտվելով, Ռոման Աբրամովիչը Մանչինիին 25 մլն եվրո էր առաջարկել 5 տարով Մոսկվայի ԲԿՄԱ-ն գլխավորելու համար: Սակայն Մանչինին նախընտրեց «Ինտերը»:

Մարզչական իր կարճ գործունեության ընթացքում Մանչինին զգալի հաջողությունների է հասել: Իսկ դա շատ կարեւոր է «Ինտերի» համար, որն ուժեղ կազմ ունենալով, վերջին տարիներին հաջողության չի հասել: Վերջին անգամ «Ինտերը» չեմպիոն է դարձել 1989 թ., իսկ 1998 թ. նվաճել է ՈՒԵՖԱ-ի գավաթը: Մանչինին մարզչական իր գործունեությունը սկսել է «Լացիոյում» որպես գլխավոր մարզիչ Սվեն-Գորան Էրիկսոնի օգնական: 2000 թ. նա տեղափոխվեց «Ֆիորենտինա» եւ թիմի հետ նվաճեց երկրի գավաթը: Սակայն հաջորդ մրցաշրջանում «Ֆիորենտինան» սնանկացավ եւ Մանչինին վերադարձավ «Լացիո»՝ արդեն որպես գլխավոր մարզիչ: Ճիշտ է, այստեղ էլ նա ֆինանսական լուրջ դժվարությունների հանդիպեց: 2002 թ. «Լացիոն» սպիտակած էր «Ինտերին» վաճառել պատասխան Ալեսանդրո Նեստային եւ հարձակվող Էռնան Կրեսպոյին: Չնայած կազմի զգալի թուլացմանը, «Լացիոն» առաջնությունում գրավեց 4-րդ տեղը եւ հասավ մինչեւ ՈՒԵՖԱ-ի գավաթի կիսաեզրափակիչ: Իսկ անցած մրցաշրջանում «Լացիոն» 6-րդն էր եւ նվաճեց երկրի գավաթը՝ հաղթելով «Յուվենտուսին»:

Մանչինին հերթական մարզիչն է, որ նոր մրցաշրջանի շեմին նոր թիմ է գլխավորում Իտալիայում: Մինչ այդ գլխավոր մարզիչը փոխվել էր «Յուվենտուսում»: Հավաքականի դեկը սանձած Մարչելո Լիպիին փոխարինել էր Ֆաբիո Կապելոն «Ռոմայից», որի պաշտոնը զբաղեցրել էր «Պարմայի» նախկին մարզիչ Չեզարե Պրանդելին: Եվ սա դեռ վերջը չէ:

Հաշիվն առայժմ հավասար է

Բավական հետաքրքրական ու թեժ մրցապայքարում է ընթանում բախման աշխարհի առաջնության եզրափակիչ մրցախաղը Ռուսաստ Կասիմջանովի եւ Մայլ Ադամսի միջեւ: Մրցակիցների 4-րդ պարտիայում հաջողությունն ուղեկցեց Կասիմջանովին: Ուզբեկ գրոսմայստերը հաղթեց 40-րդ քայլում: 4-րդ պարտիայից հետո Կասիմջանովը հաշվի մեջ կրկին առաջ անցավ (2,5-1,5): Սակայն հաջորդ պարտիան, որում սպիտակներով խաղում էր Մայլ Ադամսը, կրկին արդյունավետ ելք ունեցավ: Այս անգամ Ադամսին հաջողվեց 46-րդ քայլին իրացնել առավելությունը եւ հավասարեցնել հաշիվը՝ 2,5-2,5: Հաղթողին պետք է որոշի վերջին՝ 6-րդ պարտիան: Եթե այն ավարտվի ոչ-ոքի, ապա կնշանակվի լրացուցիչ մրցախաղ 2 պարտիայից արագ բախման կանոններով: Իսկ հարկ եղած դեպքում մրցակիցները կմրցեն կայծակնային պարտիայում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Ֆեոֆանովայի նոր նվաճումը

Հունաստանի Իրակլիոն քաղաքում անցկացված թեթեւ atլետիկայի միջազգային մրցումներում համաշխարհային նոր ռեկորդ սահմանեց ռուսաստանցի ձողացատկորդ Սվետլանա Ֆեոֆանովան՝ հաղթահարելով 4 մ 88 սմ բարձրությունը: Ֆեոֆանովան 1 սմ-ով գերազանցեց իր հայրենակցուհի Ելենա Իսինբաեւայի նախկին նվաճումը, որը սահմանվել էր 1 շաբաթ առաջ Մեծ Բրիտանիայի Գեյթսհեդ քաղաքում: Հարկ է նշել, որ վերջին 2 տարիներին կանանց ձողացատկում աշխարհի ռեկորդակրուհու համար պայքարն ընթանում է հենց վերը նշված ռուսաստանցի երկու մարզուհիների միջեւ: Իսկ մինչ այդ լավագույնն ամերիկուհի Սթեյսի Դրագիլան էր: Հետաքրքրական է, որ վերջին չորս տարիների ընթացքում աշխարհի ռեկորդը 13 անգամ բարելավվել է՝ 4 մ 61 սմ-ից հասնելով 4 մ 88 սմ-ի:

19.02.2000	Սթեյսի Դրագիլա	4,61
03.03.2000	Սթեյսի Դրագիլա	4,62
23.07.2000	Սթեյսի Դրագիլա	4,63
11.02.2001	Սվետլ. Ֆեոֆանովա	4,64
17.02.2001	Սթեյսի Դրագիլա	4,70
09.06.2001	Սթեյսի Դրագիլա	4,81
13.07.2003	Ելե. Իսինբաեւա	4,82
15.02.2004	Ելե. Իսինբաեւա	4,83
22.02.2004	Սվետլ. Ֆեոֆանովա	4,85
06.03.2004	Ելե. Իսինբաեւա	4,86
27.06.2004	Ելե. Իսինբաեւա	4,87
04.07.2004	Սվետլ. Ֆեոֆանովա	4,88

ՈՒԵՖԱ-ն մտահոգ է

ՈՒԵՖԱ-ի գործադիր տնօրեն Լարս Օլսոնը հայտարարել է, որ հնարավոր է ֆուտբոլի եվրոպական ֆեդերացիաների միությունը կրկին անդրադառնա ազգային առաջնությունների մասնակից թիմերի կրճատման հարցին: Ըստ Օլսոնի, Եվրո-2004-ի հանդիպումները մեկ անգամ եւս ապացուցեցին, որ ֆուտբոլային առաջատար երկրների ֆուտբոլիստները հոգնած էին ծանր մրցաշրջանից հետո: Նրանցից շատերը մրցաշրջանի ընթացքում 50 եւ ավելի խաղեր են անցկացրել, ինչը չէր կարող չազդել ֆուտբոլիստների ֆիզիկական վիճակի վրա: Ուստի ՈՒԵՖԱ-ն հնարավոր է արգելի ազգային առաջնությունները 20 թիմերի մասնակցությամբ անցկացնել: Ինչպես հայտնի է, Անգլիայի պրեմիեր-լիգայում եւ Ֆրանսիայի առաջնությունում հանդես են գալիս 20-ական թիմեր: Առաջարկ կա թիմերի քանակը սահմանափակել 18-ով: Այս հարցի վերաբերյալ հնարավոր է քննարկումներ սկսվեն առաջատար թիմերի ներկայացուցիչների մասնակցությամբ:

ԳՅՈՒՄՐԻ

Քարքարոսություն, որից, ցավոք, այլևս ոչ ոք չի զարմանում

Լենինականի կենտրոնում գտնվող գեղեցիկ Առագած ճեմափողոցի մի քանի բնակելի շենքերը 88-ի ավերիչ երկրաշարժին փլվեցին՝ դառնալով բազմաթիվ մարդկային զոհերի պատճառ, իսկ փողոցն ամայացավ: Շուտով այստեղ տեղադրվեց հուշաքար առ այն, որ այդ տեղում կառուցվելու է երկրաշարժի անմեղ զոհերի հուշարձանը: Դա դարձավ ու տարիներ շարունակ եղավ պսակադրության ու մոմավառության ընդունված վայր, այդ թվում՝ քաղաք ժամանող տարբեր պաշտոնական եւ ներկայացուցչական պատվիրակությունների, բարձրաստիճան ու պատվավոր հյուրերի համար, որոնք իրենց հոգու պարտքն էին համարում այդ կերպ հարգել ահավոր աղետի բյուրավոր զոհերի հիշատակը: Եվ ահա...

«Շուկայական» բիրս ու ամենակով ձեռքը հասավ նաեւ այստեղ՝ պարզ շինարարական թափոնի վերածելով զոհվածների հիշատակը խորհրդանշող հուշաքարը: Արդեն մի քանի օր է՝ վերջինս կտոր-կտոր եղած, ընկած է փողոցի այդ հատվածում նոր փորված հսկա հիմնափոսի կողքին, որը փորվել է երեւի հերթական խանութի կամ սրճարանի կառուցման համար (գործարան ու արտադրություն լիներ՝ այս քաղաքում չէր կառուցվի): Սա նույն փողոցում այսպես անարգվող արդեն երկրորդ հուշարձանն է: Առաջինը, որ նվիրված էր երիտասարդության անցյալ սխրանքներին, մի ժամանակ կից շատրվանով զբոսավայր էր: Ինչպես առաջինի դեպքում, այնպես էլ այժմ ոչ ոք հասարակությանը բացատրություն չի տալիս, ոչ ոք հասարակությունից ներողություն չի խնդրում (աղի էր պակաս...): Իսկ որ առավել ցավալի է՝ հասարակությունն ինքը կարծես թե համակերպվել ու դադարել է իրեն տվող արտակներից զուր բողոքելուց...

Եթե անգամ համարենք, որ այդ հուշաքարը գուցե կորցրել էր իր ուղղակի նշանակությունը, քանի որ բուն հուշարձանը այլ տեղում է կանգնեցվել, արվածը, միեւնույն է, բարքարոսություն է, եթե չասենք սրբապղծություն:

Մի ինչ փոխելով որպես լրագրողի ինձ հաճախ ուղղվող հարցը, ինքս եմ ուզում հարց տալ չգիտես թե ում. հանրապետության ողջ լայնքով ու երկայնքով այսպես ամեն ինչ թիզ առ թիզ վաճառելու եւ մեր հոգիներն ավերելու վերջն ինչ է լինելու...

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզպետարանը հայտարարում է մարդասիրական ավտոմեքենաների աճուրդ վաճառք.

«ՌԱԶ-3303»- 1989 թ. արտադրության, մեկնարկային գինը՝ 163.000 դրամ,

«ԳԱԶ-2410»- 1990 թ. արտադրության, մեկնարկային գինը՝ 262.500 դրամ,

«ԳԱԶ 31-02»- 1994 թ. արտադրության, մեկնարկային գինը՝ 540.000 դրամ:

Աճուրդը տեղի կունենա 2004 թ. հուլիսի 20-ին, ժամը 11-ին, մարզպետարանի նիստերի դահլիճում:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել աճուրդային հանձնաժողովին, հեռ.՝ 4-33-99:

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

FOR YOUR INTERNAL NEWS OF ARMENIA LOG ON TO www.azg.am, IN ARMENIAN, RUSSIAN, ENGLISH AND TURKISH

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

տեղեկագրքով, Ինտերնետով, CD-ով, հեռախոսով

ՍՓՅՈՒՌ տեղեկատվական ծառայություն

Երեւան, Փավստոս Բուզանդի 1/3, 7-րդ հարկ
Հեռ. 590000 www.spyur.am

до 31 августа

UNIBANK

вклад ОЛИМПИЙСКИЙ

12 месяцев

от 1000 USD

ежемесячная капитализация или выплата процентов

% ГОДОВЫХ

СТАНДАРТНЫЕ ВКЛАДЫ В ДРАМАХ И ВАЛЮТЕ

Срок вклада	Выплата процентов	AMD	USD, EURO
		До 5 млн.	До 10.000
до востребования		0*	0*
31 - 90 дней	в конце срока	7,5	5,5
	ежемесячно	7	5
91 - 182 дня	в конце срока	8	6,5
	ежемесячно	7,5	6
183 - 364 дня	в конце срока	8,5	7,5
	ежемесячно	8	7
365 - 550 дня	в конце срока	9	8
	ежемесячно	8,5	7,5

Вклады превышающие 5 млн. AMD или 10 тыс. USD, EURO и/или сроком более 550 дней - по индивидуальным ставкам.
* в отдельных случаях процентная ставка определяется на договорной основе

Минимальная сумма срочных депозитов
- 50.000 AMD
- 100 USD, EURO

АДРЕСА ФИЛИАЛОВ ЗАО "ЮНИБАНК"

Центральный офис:
г. Ереван, ул. Амиряна 12
тел: (3741) 539870
e-mail: unibank@unibank.am

Филиалы в г. Ереване:

Филиал "КЕНТРОН"
ул. Абовяна 26
тел: (3741) 542431

Филиал "МАЛАТИЯ"
ул. Себастия 141
тел: (3741) 776627

Филиал "КОМИТАС"
ул. Комитаса 15/2
тел: (3741) 261838

Филиалы в Армении:

Филиал "ВАНАДЗОР"
г. Ванадзор, ул. Тигран Мец 53
тел: (37451) 40872

Филиал "ГЮМРИ"
г. Гюмри, ул. Ахтанаки 1
тел: (37441) 33055

ЮНИБАНК РЕАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ 53 98 70 www.unibank.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

Դրամավարկային տեղեկատու

Հուլիսի 2-8-ն ընկած ժամանակահատվածում դրամավարկային ցուցանիշները հետեւյալն էին.

Դրամական բազա, դրամական զանգված

Փողի բազան աճել է 260 մլն դրամով եւ հուլիսի 8-ին կազմել 107 մլրդ 907 մլն դրամ: Զուտ արտաքին ակտիվներն (առանց սեփականաբնորհման միջոցների) աճել են 3 մլրդ 809 մլն դրամով, իսկ զուտ ներքին ակտիվները նվազել են 3 մլրդ 549 մլն դրամով:

Հունիսի 25-ից հուլիսի 2-ն ընկած ժամանակահատվածում փողի զանգվածը աճել է 2 մլրդ 584 մլն դրամով եւ հուլիսի 2-ին կազմել 234 մլրդ 96 մլն դրամ (ընդգրկված են 19 բանկերի ցուցանիշները): Շրջանառության մեջ կանխիկ դրամը նախորդ շաբաթվա համեմատ աճել է 2 մլրդ 633 մլն դրամով, կազմելով 84 մլրդ 874 մլն դրամ: Դրամով ցպահանջ ավանդները նվազել են 2 մլրդ 318 մլն դրամով եւ կազմել 27 մլրդ 743 մլն դրամ: Դրամով ժամկետային ավանդները նվազել են 1 մլրդ 347 մլն դրամով եւ կազմել 11 մլրդ 199 մլն դրամ: Արտարժույթով ավանդներն աճել են 3 մլրդ 616 մլն դրամով եւ կազմել 110 մլրդ 280 մլն դրամին համարժեք արտարժույթ: Ընդ որում, արտարժութային ցպահանջ ավանդները կազմել են 56 մլրդ 894 մլն դրամ (նախորդ շաբաթվա համեմատ աճել են 3 մլրդ 585 մլն դրամով), ժամկետայինները՝ 53 մլրդ 386 մլն դրամ (աճը՝ 31 մլն դրամ):

Ֆինանսական շուկա

Հուլիսի 2-8-ն ընկած ժամանակահատվածում թողարկվել է 500 մլն դրամի 52-շաբաթյա ՊՊ՝ 4,7628 տոկոս տարեկան եկամտաբերությամբ:

Արտարժույթի շուկա

Հուլիսի 2-8-ն ընկած ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ փոխարժեքն արժեքավորվել է 0,03 տոկոսով՝ 534,12 դրամից հասնելով 533,98 դրամի:

Նշված ժամանակահատվածում արժութային շուկայում իրականացվել են շուրջ 31,430 հազ. ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի գործարքներ, որոնց միջին կշռված փոխարժեքը կազմել է 533,69 դրամ:

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Շիրակի մարզում գործող **«Խաչի իշխան» ՍՊԸ** ձկնաբուծական նպատակով «Ցեղեցի ձոր» կոչվող տեղամասի գետային ջրերից 41,1 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հուլիսի 26-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է **«Ցեղոնակ գրուպ» ՓԲԸ** կոմունալ-կենցաղային եւ արտադրական նպատակներով Ցեղոնակի հանքավայրի թիվ 1 հաղորդակ ջրի աղբյուրից 0,5 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հուլիսի 22-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է **Սոնոլիտ-Սոլիտակ» ՍՊԸ** ձկնաբուծության նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսներից 2,0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հուլիսի 22-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է **«Սստրիկ-Հովհաննես» ՍՊԸ** ՀՀ Սյունիքի մարզի Լոռաձոր գետի ձախ ափում փոքր ՀԷԿ կառուցելու եւ Լոռաձոր գետից ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հուլիսի 22-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Վայոց ձորի մարզի **Սեւ** հանքավայրի խմելու ճեռնական եւ որոգման նպատակներով Գազի լեռան սառցե աղբյուրներից 2,0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հուլիսի 22-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Կոտայքի մարզում գործող **«Ճոխաղբյուր» ՍՊԸ** ձկնաբուծության նպատակով ստորերկրյա ջրային ռեսուրսներից 22 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2004 թ. հուլիսի 22-ին, ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն ծանուցվում է ՀՀ Արարատի մարզի Մարնաբուծության նպատակով «Կարդույս լճից» մակերեւութային ջրային ռեսուրսներից 15,0 լ/վրկ ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Գործունեությունից կեղտաջրեր չեն առաջանում:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 23.07.04 թ., ժամը 16:00-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ՝ 65, դասիչ՝ 69150 Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 12.07.2004 Գինը՝ 100 դրամ